


29171.09


12 - 74



ՆԺԱՄԱԿՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ
ՉՅԱՌՔԸ

ՈՊՈՎԿԻՆ

ԶԵԽՈՎՃԻ ԿՅԱՆՔԸ





ԽԵԱՆԱԿՈՐ ՄԱՐՈԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ

ՅԵՐՈՊՐԴ ԳԻՐՔ

Ա.Պ. ԶԵԽՈՎ

1860 - 1904



ՅԵՐՈՊՐԴ - 1937

ՈՂՍԿԻՆ

19 NOV 2010
891-71-09
T-14
Կ. 1

ԶԵԽՈՎԻ
ԿՅԱՆՔԸ



52

ՊԾՏՀՀԱՅ
ՀԱՅԱՄՊԿԿԱՅ ՄԱՍԿՈԱՏ. ԳՐԱՎԵԼԻՔՅԱՆ ԱՌԻՆ,

14.900

24 JUL 2013 արգմանիչ Արշ. Տեղ-Հովհաննեայան
 Խմբագիր՝ Թոռքեն Զարյան
 Տեխ. Խմբագիր՝ Ան. Գասպարյան
 Մթբագրիչ Ա. Շահբագիր



Հ749
40

ԱՅԱՋՐՈՒԹԻՒՄ

ՏԱԳԱՆՐՈԳՈՒՄ

«Վեհապահուկը ուն գլուխ ունի»

«Մոյսեեվսերի տանը յես «մտերիմ» եյի քեզ հետ:
 Մենք ունեյինք «Վասիլի» անունով հետիոտն մի
 հեծյալ և մեծ թվով տուփեր՝ խանութից գողացած:
 Տուփերից մենք ամբողջ բնակարաններ ելինք կա-
 ռուցում վասկայի համար, կանթեզներ եյինք վառում
 և յերեկոները ժամեր շարունակ նասած, դիտում եյինք
 այդ յերեակայական սենյակների շարքերը, ուր փայ-
 տյա, ողաճն չուած վոտներով հեծյալ Վասկային առաջին
 տեղն եր հատկացվում: Դու մտածող եյիր այն ժամա-
 նակ և, հավանորեն, խորհրդածում եյիր «վիշապս ձուկը
 մթծ զլուխ ունին թեմայով:

Յես այն ժամանակ զիմնապիտի յերկրորդ դասա-
 րանում եիի: Հիշում եմ այդ այն պատճառով, վոր
 մեկ անգամ, քեզ հետ «մտերմացած» լինելով, յես
 յերկար և տխուրտքում, քո խաղալիքներին նայե-
 լով, միտք եյի անում այն մասին, թե ինչպիս խու-
 սափեմ ծեծից, ստացածս միավորի համար:

Հետո յես խռովեցի քեզնից: Դու սնդուկի վրա նստած, յերկար և շատ լաց եյիր լինում, խնդրելով՝ «մտերմացիր ինձ հետ», բայց յես անդրդվելի մնացի և քեզ հետ մտերմությունը ստոր բան եյի համարում...

Հետո անցան տարիներ... Հիշում եմ քեզ նախապատրաստական դասարանում. հիշում եմ, ինչպես մենք հայրական խանութիւնի լիակատար տերն եյինք դառնում, յերբ նա մեկնում եր Մոսկվա...

Իմ ազգեցությունը, վորպես ավագ յեղբոր ըստ սկզբունքի, սկսեց չքանալ... Վորպեսզի քեզ նորից նվաճեմ, յես թիթեղյա արկղով խփեցի քո գլխին: Դու, հավանորեն, հիշում ես այդ: Դու հեռացար խանութից և գնացիր հայրիկի մոտ: Յես սաստիկ ծեծի եյի սպասում, բայց մի ժամից դու վեհապանձ, Գավը յուշկայի ուղեկցությամբ, անցար իմ խանութի դռան առաջից Փատերի¹ ինչ վոր հանձնարարությամբ և դիտափորյալ չնայեցիր ինձ վրա: Յես յերկար նայում եյի քո յետեցից, յերբ դու հեռանում եյիր և, ինքս չդիտեմ ինչու, լաց յեղա...»

Յերեխան, վորը մտածում եր, վիշապաձուկն արդյոք մեծ գլուխ ունի, Անտոն Զեխովն եր: Իսկ թիթեղյա տուփով նրա գլխին հարվածողը մեծ յեղբայր Ալեքսանդրը, վորը մեկ անգամ Անտոն Պավլովիչին դրած նամակում վերհիշում ե մանկության հեռավոր տարիները:

Զեխովներն այն ժամանակ ապրում եյին Տագանը ըստում:

Փողոցի յերկանքով ձգվում եյին սպիտակ տնակների շարքերը: Նրանց կոնաչ փեղկերը միշտ փակ

¹ Ֆատեր (գերմ.) հայրիկ:

եյին, տնակները թվում եյին մեռած: Սալարկած փողոցներում խոզեր եյին թափառում:

Ծովի սեպ ափին ժանգոտած թնդանոթներ եյին դրած: Նավամատուցում մշակները ծուլորեն դատարկում եյին հունական առաջաստանավերից և տաճկական ֆելուգաներից կանթեղի յուղի տակառներ և ցարգրադի ծծակների արկղեր:

Մի ժամանակ Տագանը ոգի նավամատուցի պանորաման ծանոթ և յեղել ամբողջ աշխարհի ծովագնացներին: Տագանը ոգի եյին գալիս նավեր իտալիայից և իսպանիայից, Անգլիայից և Յեղիպատոսից: Նրանք բերում եյին համեմունքներ և գինի, վերադառնում եյին ուկրաինական ծանր ցորենով բեռնված:

Ընդարձակ առևտուրը արտասահմանի հետ Տագանը ոգի գրավում ոտարերկրյա վաճառականների, արկածախնդիր մարդկանց և մաքսանենդների: Գաղտնի ստորերկրյա անցքերը տանում եյին գեղի մաքսանենդ ապրանքների պահեստները:

Հացամթերքների գրասենյակները մեծ մասամբ պատկանում եյին հունական և իտալացիներին: Նրանցից շատերը հին աշխարհակալների և ծովահենների հետնորդներն եյին: Հարստանում եյին աներեկակալելի արագությամբ, Յեղիպատոսի մեծահարուստների ցանկում առաջիններից մեկը համարվում եր Տագանը բնակիչ հույն Մարկ Վալյանոն:

Նուրբ քանդակածեփը զարդարում եր առանձնատների ճակատներն, ուր ապրում եյին հարուստ ոտարերկրյա վաճառականները: Նրանց համար իտալիայից ոպերային խումբ եյին հրավիրում Տագանը գիտական հույն ապահովությամբ:

Պետրովսկի փողոցի նեղ թատրոնում յերգել և հոչակավոր արտիստուհի Պառլինա Լուկկան և փայ-

տիկն ե շարժել հոչակված դիրիժյոր Հաետանո Մոլլան:
Այդտեղ Շեքսպիրի վողբերգություններն են խաղացել
մեծ դերասաններ ները Ռլրիջը և իտալացի Տոմազո
Սալլինին:

Դա անցյալ դարի կեսերին եր: Հետո Տագանրոդի
գործերը վատացան: Հարեանության մեջ նոր քաղաք
սկսեց աճել՝ Ռոստովը: Առևտուրը անցավ նրան:
Նավերն այժմ անցնում եյին Տագանրոդի մոտով:

Տագանրոդը մարում եր:

Տագանրոդի փողոցներից մեկում՝ Պոլիցեյսկի
փողոցում, ապրում եր առևտրական Պավել Յեգորովիչ
Չեխովը: Նա վորոնեժիան ճորտ գլուղացիներից եր:
Մանուկ հասակում ծառայել եր վորպես «դուքնի աշ-
կերտ», հետո «ապրանք տանող» և ավագ գործակա-
տար տագանրոցյան վաճառական, միլիոնատեր Կորի-
լինի մոտ: Ամուսնանալով մարշանակեցի մի վաճա-
ռականի աղջկա՝ Յեկանիա Յակովլեվնա Մորոզովայի
հետ և մի փոքր դրամագլուխ հավաքելով, Պավել
Յեգորովիչն հիմնում է իր սեփական գործը՝ նպարե-
ղենի խանութ, գինետնով: Գինին վաճառվում եր այն-
տեղ «գուրս տալով և ներսում խմելով»:

1860 թվի սկզբում Պոլիցեյսկի փողոցի տնակում
մի փայտյա որորոց յերեվաց. հունվարի 17-ին¹ ծնվեց
Չեխովների յերրորդ վորդին: Անվանեցին նրան Անտոն:

ՓՈՔՐԻԿ ՏԱԺԱՆԱԿԻՐՆԵՐ

Կլանքը Չեխովների ընտանիքում ընթանում եր
մեկ ընդ միջտ սահմանված կարգով:

Պավել Յեգորիչը սիրում էր յեկեղեցական յեր-

¹ Նոր տոմարով հունվարի 29-ին:

գեցողություն: Նա կազմել եր իր սեփական յերգեցիկ
խումբը և հանդես եր գալիս յեկեղեցիներում: Իր
կրտսեր վորդիներին Պավել Յեգորիչն ստիպում եր
խմբում կատարել բարձր ձայները՝ առաջին ձայնը:

Յերգեցողությունը տեղի էր ունենում յերեկո-
ները: Պավել Յեգորիչի խանութ եյին հավաքվում
վարբինները (Զեխովի յերգեցիկ խումբը բաղկացած եր
գլխավորապես դարբիններից) և նստում եյին ոճառի
կամ մոմի արկղների վրա: Յերգեցողությունը տեսում
էր մինչև կես գիշեր: Յերեխանների աչքերը փակվում
եյին, սակայն հեռանալ չեյին համարձակվում: Խակ լու-
սադեմին պիտի վեր կենացին և յեկեղեցի գնային: Յեկե-
ղեցում յերեխանները շատ ժամեր եյին մնում կանգնած:

«Մեզ վրա նայում եյին գորովանքով և նախան-
ձում եյին իմ ծնողներին, իսկ մենք այդ ժամանակ
մեզ զգում եյինք վորպես փոքրիկ տաժանակիրներ»:

Այսպես ե վերհիշում Չեխովն այդ ժամանակների
մասին շատ տարիներ հետո:

Այն ըոլոր հարցերում, ինչ վերաբերում եր յեկե-
ղեցական ծեսերի կատարմանը, Պավել Յեգորիչը խիստ
եր և անգութ: Տանը յերեխաններին հարկադրում եյին
անվերջ աղոթքներ ասել և բազմաթիվ անգամ ծունը
դնել: Յեթե Պավել Յեգորիչի մոտ վարդապետներ և
քահանաներ եյին գալիս, յերեխանները պետք ե համ-
բուրելին նրանց ձեռները:

Տանը սահմանված կարգերից, յուրաքանչյուր
թերացման համար Պավել Յեգորիչը խստորեն պատ-
ժում եր: Անտոշան շատ անգամ եր ծեծ ուտում:

Ընտանիքում միակ միսիթարությունը մայրն եր՝
հեզ և սիրող մի կին: Բայց Յեկանիա Յակովլեվան

ամեն բանում յենթարկվում եր ամուսնուն և չեր կարողանում յերեխաներին պաշտպանել Պավել Յեգորիչի կոշտ խոսքից և ծանր ձեռքից։ Նա գաղտնաբար միայն փայփայում եր Անտոշային։

Բացի յեկեղեցական յերգեցողությունից, մի տառապանք ևս կար՝ խանութը։ Պավել Յեգորիչը հարկադրում եր վորդիներին հերթով որապահություն անել իր նպարեղենի խանութում։

— Բակում թրև գալու բան չկա, խանութ գնա և լավ մտիկ տուր, առետուր սովորիր, — շարունակ լսում եր Անտոշան հորից։

Յերկար ժամեր Անտոշան նստում եր հետեւյալ մակագրությունն ունեցող խանութում՝

Թեյ, օախար, սուրեն, ոնառ, յերօիկ
յեվ այլ գաղութային ապրանքներ

Այդ «գաղութային ապրանքները» շատ բազմազան եյին՝ տառեխներ և ծրաբներ, սանրեր և համեմունքներ, ծծակներ և կոշկաներկ ։ Վաճառում եր Պավել Յեգորիչը նույնպես թելի վրա հազցրած, չորացած ձկան սուր հոտ ունեցող չիրուս կոչված սառնաշաքար, մոմե լուցկի, աշակերտական տեսրակներ 3 և 5 կոպեկանոց։ Մեկ անգամ խանութ և գալիս Անտոշայի ընկերունի Մանյա Դրոսսին։ Տեսրակի համար վճարում ե 3 կոպեկ, բայց սխալմամբ հինգ կոպեկանոց տեսրակ և վերցնում։ Պավել Յեգորիչը վազում և Մանյայի յետեկից և հայոյանքով խլում և տեսրակը։

Անտոշան դասերը պատրաստում եր խանութում։ Զմեռը խանութում սաստիկ ցուրտ եր, յերեխաների ձեռները կապտում եյին։ Մյուս որը, խանութում նստելու պատճառով, Անտոշան գիմնազիայում միավոր եր ստանում դասը վատ պատրաստած լինելու համար, իսկ միավորի համար Պավել Յեգորիչը ծեծում եր։

Ռտար մարդկանց մոտ եր Անտոշան ջերմություն և փաղաքանք վորոնում, ընտանիքում ամենեին չունենալով այդպիսիք։ Փախչում եր Մարֆա Իվանովնա և Լյուդմիլա Պավլովնա հորաքույրերի մոտ, վորոնք յերկուսով ել ջերմ սիրում եյին Անտոշային։ Դժկամակությամբ եր Անտոշան տուն վերադառնում։

— Ինձ համար այստեղ լավ ե, — հաճախ ասում եր նա Լյուդմիլա Պավլովնային։

«ՆԵՐՆ ԱԼՖԱՎԻՏԱՐԻՈՆ»

Պավել Յեգորիչը մեծ ընտանիք ուներ։ Իսկ իր խանութում գրոշներ եր վաստակում։

Յերեբնն տան առաջ կանգ եր առնում զույգ ձի լծած մի կառք, Հարուստ հույնի մոտ ծառայող կառապանը խանութ եր մտնում և թութուն գնում։ Պավել Յեգորիչն այն ժամանակ հիշում եր Վալյանովի և Ալֆերակի առանձնատները։ Յերեկոներն այդ տներում մեծ ջահեր եյին վառվում։ Բաց լուսամուտից լույս և յերաժշտություն եր լցվում փողոցը։ Հույների առանձնատները դղյակների եյին նմանվում։

Պավել Յեգորիչի ծանոթ հույները խորհուրդ եյին տալիս յերեխաներին հունարեն սովորեցնելու

— Մեզ մոտ Հունաստանում ամեն ինչ կա, —

բացականչում եր Սամատին, Զեխովի խանութի մշտական հաճախորդը:

Յեղ այդ ասելիս, մի բաժակ գինի յեր խմում:

Ու Պավել Յեգորիչը վորոշում և Նիկոլային և Անտոշային տալ հունական յեկեղեցուն կից դպրոցը:

Դպրոցը զեկավարում եր Նիկոլայ Սպիրիդոնովիչ Վուչինան, հրաշեկ մորուքով մի հույն: Նրա անցյալը խորհրդավոր եր: Ինքն իր մասին պատմում եր, վոր Տագանրոդ եւ յեկել առանց «փանթալոնի»:

Վուչինայի դպրոցը կոչվում եր հնգամյա: Էայց հինգ դասարանն ել տեղափորված եր մեկ սենյակում: Սենյակում հինգ շարք նստարան եր դրված: Յուրաքանչյուր շարք ուներ թվակիր տախտակ՝ I, II, III և այլն: Դա ել հենց դասարանն եր:

Առաջին շարքում յերեխաները բացականչում եյին՝

— Այիր, բեն, գիմ, դա, լեչ:

Վերջին շարքում նախազների շապիկներ հագած պատանիներ եյին նստած և խոսդու ձայներով անգիր սերտում եյին Հունաստանի պատմությունը:

Զեխովներին նստացրին առաջին շարքում: Վուչինան նրանց առաջ դրեց մի-մի լղարիկ գրքուկ: Կոչվում եր այդ գիրքը «Նեռն Ալֆավիտարիոն», վոր հայերեն կնշանակե «նոր ալբրենարան»:

— Վաղը, — առաց Վուչինան, — յուրաքանչյուր գլրքի համար պետք եւ քսան կոպեկ բերեք: Ասացեք հայրիկին: Իսկ այժմ սովորեցեք՝ այիր, բեն, գիմ...

Դպրոցում սովորում եյին գլխավորապես հույն նավաստիների և Տագանրոդի կառապանների յերեխաները:

Աշակերտների սիրած զբաղմունքը նավահանգը տուում թափառելն եր: Այնուեղ ոտարերկրյա նավեր եյին բեռնթափում: Նավամատույցում արկղների և հակերի լեռներ հյին գոյանում, վորոնցից նարնջի և չամիչի նուրբ ըուլյը եր գալիս: Յերեխաների հարձակութերն այդ ապրանքների վրա հաճախ անհաջողության եր մատնվում: «Նեռն Ալֆավիտարիոնը» ձեռներն եյին առնում նրանք արյունոտած գեմքերով:

Վուչինայի դպրոցում նույնպես նրանց ծեծում եյին: Առաջին իսկ դասերին Նիկոլայը և Անտոնը զգացին ուսուցչական քանոնի հարվածները: Անտոշն ատեց Վուչինային:

Մեծ ուրախությամբ դիտում եյին աշակերտները ինչպես սաստիկ զայրանում և Վուչինան, իերք դպրոցի բաց լուսամուտներից ներս ելին նայում փողօցի յերեխաները և խմբով ծաղրում եյին Նիկոլայ Սպիրիդոնովիչի հրաշեկ մոբուքը՝

Եկը կարմրին ե հարցնում,
Ինչով ես մորուքդ ներկում:

Վուչինան փողոց եր նետվում, ուռսական հայնոյանքները հունականի հետ խառնելով: Յերեխաները փախչում եյին և Վուչինան, դասարան վերադառնալով, զայրույթից հարվածում եր քանոնի վոչ թե տափակ կողմով, այլ կողքով. այդպես ավելի մեծ ցավ եր պատճառում:

Պավել Յեգորիչը դպրոց եր գալիս տեղեկանալու վորդիների հառաջադիմության մասին: Վուչինան հավատացնում եր, վոր ամեն ինչ սքանչելի յե: Յեղալը նույնիսկ պարզեատրվեցին «բրավիոնով»

(«բուավո» բառից)՝ խրախուսական գրի նման մի բան։ Նիկոլյայը տուն բերեց թերթիկ «Եսկվիս» մակագրությամբ, վոր հունարեն նշանակում եւ բարեպաշտ։ Անտոշայի բրավիոնում գրված եր՝ «Եպիմելի», այսինքն՝ ջանասեր։

Մեկ անգամ Պավել Յեգորիչը հրավիրեց իր մոտ ծանոթ հուների, վորդիների գիտությամբ պարծենալու նպատակով։ Բայց պարզվեց, վոր այիբ, բեն, գիմից այն կողմ վոչ «բարեպաշտը», վոչ «ջանասերը» առաջ չելին գնացել։ Այդ որը Ստամատին չբացականչեց՝ «Հունաստանում ամեն ինչ կա», իսկ Անտոշան քնելու գնաց արցունքու աչքերով։

Աշնանը Անտոշայի համար կապույտ համազգեստ կարեցին և տփեցին գիմնապիա։

ԱՍՏԻՃԱՆ ԳԶԼՈՂՆԵՐ

Զեխովն սկսեց հաճախել կաղարմայի նման մեծ, կեղտոտ-սպիտակ շենքը, յերկար կիսամութ միջանցքներով։ Այստեղ չկար Վուչինայի քանոնը, մարմնական պատիժները պաշտոնապես վերացած ելին, բայց գիմնազիստներին վերաբերում ելին վորպես փոքրիկ հանցագործների։ Դասարանների դռներում բացված ելին փոքրիկ լուսամուտներ, ինչպես բանտի խցերում։ այդ լուսամուտներից «պեղելները»՝ վերացցուները հետեւում ելին աշակերտների վարք ու բարքին։

Խսապեկտոր Դյակոնովը, ձեռները շփելով և գլուխը ցնցելով, հոգի յեր հանում խրատներով ու հրահանգներով։ Դրանց իմաստը հետեւյալն եր՝ գիմնա-

դիստները պետք եւ իրենց յուրաքանչյուր արարքը համաձայնեցնեն իշխանության հետ։

Առաջին դասարանների պատուհասը, աշխարհագրության և մաթեմատիկայի ուսուցիչ Կրամասակովն աշակերտներին գիմում եր վոչ այլ կերպ, քան՝

— Ե՛շ, հիմա՞ր, անսամեն։

Զիկոն, հին հունական լեզվի դասատուն, աշակերտների ծնողն՝ րից կաշառք եր վերցնում լավ թվանշան նշանակելու համար։ հինգեր և չորսեր նշանակելու միջոցով մի փոքրիկ դրամագլուխ կուտակելով, նա վերադարձավ իր հայրենիքը, Հունաստան։

Լատիններինի դասատուն, չեխ Ուրբանը, անխոնջ լրտեսում եր բարձր դասարանների աշակերտներին և անթիվ մատնություններ եր գրում նրանց գեմ, մեղադրելով ընդհատակյա հեղափոխական խմբակների պատկանելու մեջ։ Իշխանությունը խրախուսում եր Ուրբանի լրտեսական աշխատանքը։

Դիմապիստները պաշտպանվում եյին իշխանությունից ծաղրով։ Դյակոնովի քայլվածքը փափուկ եր, անլսելի, նրան անվանեցին «քառասնոտն»։ Կրամասակովը յերկար, ցած կախված բեխերով նման եր չինացու՝ նա կոչվեց «չինական իմպերատոր»։ Դաստիարակին, զվիցերացի Մոնտանը դիմում կոչում եյին Բաժակ Իվանիչ։

Բայց գործը միայն մականուններով չեր սահմանափակվում։ Ուրբանն այնպիսի ատելություն առաջացրեց, վոր գիմնազիստները մահափորձ կատարեցին նրա կյանքի դեմ։ Ուրբանի բնակարանում պայթյուն կազմակերպվեց։

«Աստիճան գջողներ»—այսպես անվանեց Զեխովն

այդ մանկավարժներին: Նրանցից զանազանվում եր միայն մեկը: Դա Ֆ. Պ. Պոկրովսկին եր: Լինելով զարգած և սրամիտ, նա զասարանը գրավում եր զրականության մասին ունեցած զրույցներով: Նրա դասին խոսում ելին Շեքսպիրի, Գյոթեյի և Պուշկինի մասին: Պոկրովսկին վոչ միայն չեր լրտեսում աշակերտներին, այլև հաճախ թաղցնում եր իր մոտ բարձր դասարանների աշակերտներին վոստիկանության հետապնդումներից:

Պոկրովսկին մեծ ազդեցություն ե ունենում Զեխովի վրա: Նա նկատում ե իր աշակերտի յերգիծաբանական տաղանդը և աշխատում ե զարգացնել այն:

Ինքը Պոկրովսկին Շչեդրինի մեծ լերկրպագու եր: Նա Զեխովի մեջ հետաքրքրություն ե արթնացնում դեպի հաշակավոր յերգիծաբանի ստեղծագործությունները:

Պոկրովսկին Զեխովին գրատախտակի մոտ ե կանչում այսպես:

— Զեխոն-տե՛:

Տարրինակ մականունն այդպես ել մնաց:

Պավել Յեգորիչն այնքան ել չեր հավատում, վոր իր լերեխաններին կհաջողվի «գրոց մարդ» դառնալ: Համենայն դեպս Զեխով յեղբայրներին ընդունել տվին գավառական դպրոցի արհեստագործական դասարաններն, ուր կարող ելին սովորել նաև դիմուղիստները: Դպրոցը կառավարում եր մի մարդ այնքան յերկար մորուքով, վոր նրանով մաքրում եր աշխատանքի ժամանակ ծնկներին դրած տախտակի վրա յեղած կտորտանքը: Եիկոլայ և իվան Զեխովներին շուտով արհեստագործական դասարաններից:

արձակեցին «զորեղ վարքի և դանդաղ հառաջադիմության» համար, ինչպես ասված եր պաշտօնական փաստաթղթում: Անտոնին թողեցին: Նրան դերձակություն ելին սովորեցնում, և շուտով նա ոկուց էրեալ իր կարած մակարոնի նման բարակ տրիկոյի անդրավարտիկով կամ աներևակաչելի գուշնի վերնաշապկով:

Այնուամենայնիվ Անտոշայի կյանքում կային և ուրախություններ: Պոլիցյանկի փողոցի վերջում բացվում եր ծովը: Անտոշան ամառը կառթը վերցրած, ամբողջ որերով անհայտանում եր նավահանգստում: Հաճախ յերեխանները գնում ելին քաղաքից գուրս Ցելիգավետինան պուրակը: Այնտեղ նրանք «զբաղվում ելին գանգեր վորոնելով», ինչպես և վայել եր Մայնիդիդի և Ֆենիմոր Կուպերի ընթերցողներին:

Զեխովների տան յետերը ընդպարձակ ամայի մի տեղ կար, քոլուտով և կանեփով ծածկված: Այդ տեղը կոչվում եր «հավի թագավորի կալվածք»: Այդտեղ Զեխովը սարյակ և սերինոս եր վորսում: Վորսած թուշուները փոխանակում եր կամ ծախում: Իր մանկությունն ե վերհիշում Զեխովը, յերբ «իմ կյանքը» պատմվածքում նկարագրում ե, ինչպես հերոսը սերինոսը հաջողեցնում ե մեկ կոպեկով ծախել՝ «այնուամենայնիվ փոքրիկ ոգուտ ե»:

Սիրում եր Անտոշան տարբեր տեսակ ծպտկեր: Մեկ անգամ նա մուրացկանի նման հագնված, գնում ե իր քեռու՝ Միտրոֆոն Գեորգիկիչի մոտ: Քեռին նրան չի ճանաչում և յերեք կոպեկ վողորմություն ե տալիս:

Ամառը Անտոշան գնում եր ասիստան, պապի մոտ: Պապն ապրում եր Տագանրոդից վաթուն վերստի

Հ 749

Կ 0

Ա. Պ. Զեխով—2



վրա յեղած կնյաժոյում, ուզ կալվածքի կառավարիչ եր:
Յեզան սայլով մինչև կնյաժոյ հասնելը տեսում եր
մի քանի որ: Ալդ որերին Զեխովն իրեն ազատ եր
գգում և տափաստանում ամեն ինչ նրան թվում եր
ցնծալից և յերջանիկ:

ՅԵՐԿՈՒ ԹԱՏՐՈՆ

Զեխովը տասներեք տարեկան եր, յերբ առաջին
անգամ թատրոն ընկապ:

Ներկայացնում եցին «Զքնաղ Հեղինե» ոսկերետ-
կան: Յերկինքը կնճռոտվում եր, լուսինը լույս եր ար-
ձակում ինչպես դեղատան լուսամուտի գեղին գունդը:
Բայց յերկինքը, սյուները և լուսինը Զեխովին սքան-
չելի թվացին:

Այդ որվանից Զեխովն անհամբեր սպասում եր,
յերբ պիտի մեծ դասամիջոցին յերեա ժորժը՝ թատ-
րոնի հայտարարություններ տարածողը: Նա հայտա-
րարում եր առաջիկա որերի ոեպերտուարը: Յեթե
ոեպերտուարը հետաքրքիր եր լինում, ժորժին թոցը-
նում եյին ոգում:

«Գանգեր վորոնելը» և նույնիսկ սերինոսներ վոր-
սալը անցան յերկրորդ շաբթը: Ամբողջ փողը, վոր
հաջողվում եր Զեխովին հավաքել, գնում եր թատրոնի
վրա: Բարեկախտաբար Զեխովը ծանոթանում ե թատ-
րոնի մեքենավարի հետ: Նա ձրիաբար տեղավորում
եր նրան պատշգամբում: Զեխովը հաճախ թատրոն եր
գնում գիմնազիայի դասընկեր Վիշնևու հետ: Վիշ-
նևու հետագալում դարձավ Մոսկվայի Գեղարվես-
տական թատրոնի հայտնի դերասան և Զեխովի պիես-

ների առաջին գերակատարը: Զեխովը նվիրել է վիշ-
նևու իր լուսանկարը հետեւյալ մակագրությամբ,
«Պետրարկի և Ժորժի ժամանակակցին»: Մակագրու-
թյունը թվում եր խորհրդավոր, չը վոր իտալական
հոչակավոր բանաստեղծ Պետրարկն ապրել և XIV
դարում: Բայց Տագանրոդի թատրոնի մեքենավարին
Պետրարկ եյին կոչում...

Թատրոն հաճախելու համար պետք եր ստանալ
գիմնազիայի իշխանության թուլացվությունը: Թուլ-
ացվություն դժվարությամբ եյին տալիս և միայն տոն
որերին յեղած ներկայացումներին: Արգելքից խուսա-
փելու համար Զեխովը քաղաքացիական հագուստ եր
հագնում: Սակայն այդ ել միշտ չեր ոգնում, վորով-
հետեւ դասարանական վերակացուները թատրոն եյին
գալիս դիտմամբ հետախուզելու գիմնազիստներին:
Զեխովը հարկադրված եր լինում յերբեմն վոչ միայն
հագուստը փոխել, այլև գրիմ անել: Նա թատրոն եր
գնում մորուք կցցրած և ակնոց ծածկած: Այդ գեպ-
ում այդ տարորինակ արարածը համարձակորեն անց-
նում եր ուսուցչական համազգեստ հագած կերպարան-
քի մոտով:

Պատշգամբում տեղերը համարակալված չեյին և,
վորպեսզի առաջին կարգերում տեղ դրավի, Զեխովը
թատրոն եր գնում ներկայացումն սկսվելուց յերկու
ժամի չափ առաջ: Թատրոնը դատարկ եր: Լուսավոր-
վում եր միայն մեկ գաղի լապտեր և վերեկից սրահը
սև փոսի եր նմանվում: Պատշգամբը լցում եր հա-
սարակությամբ և Զեխովին սեղմում դեպի բարյերը:
Հանդիսականներն արեածազկի սերմ եյին չոթում,

միջարարներին դիտում եյին ոթյակներում նստած
հույն միլիոնատերերին իրենց կանանց հետ:

Նախկին Պոլիցելսկի փողոցի տնակում, ուր ծնվել
է Զեխովը, այժմ ել կախված ե այն հայտարարու-
թլուններից մեկը, վորը կպցնում եր ցանկալատե-
րին Ժորժը: Հայտարարությունը կրում ե 1878
թիվը և հաղորդում ե Ոստրովսկու «Գայլեր և վոչխար-
ներ» պիեսի բեմադրության մասին: Ոստրովսկին
Զեխով-գիմնազիստի սիրած դրամատուրգն եր: Ոստ-
րովսկու «Անմեղ մեղավորներ» պիեսի բեմադրության
ժամանակ Զեխովը, հետեւլով մոր և վորդու վիճակին,
արտասվում ե:

Զեխովը թատրոնում տեսնում ե նաև շատ այլ
ներկայացումներ, Փրանսիական «Յերեք գլխարկ»
ուրախ վոդկիլը, «Թալանված փոստ» հաֆշտակիչ
դրաման, «Փարիզյան մօւրացկաններ» զգայացունց
մելոդրաման, «Թելածաղիկ» ոպերետան:

Յերկար ժամանակ հիշում եր Զեխովը «Թոմաս
յեղբոր տնակը» պիեսը:

— Թոմ, քո ձեռքը ուժեղ ե դեռևս, — տրագիկ
բացականչեց նա, ձեռքը ընկերոջ ուսին դնելով:

Մի գիմնազիստ, Տագանրովի խմբի դերասաննե-
րից մեկի վորդին, Զեխովին տանում ե կուլիսները:
Զեխովը ծանոթանում ե գերասանների հետ, դիտում
ե, ինչպես են դրվում գեկորները: Իր ամբողջ կյան-
քում Զեխովին հետաքրքրում են կուլիսները և թատ-
րոնական մեքենաները:

Բացի քաղաքային թատրոնից՝ Զեխովի կյան-
քում կար նաև մեկ այլ թատրոն՝ ընտանեկանը:
Զեխովի յեղբայրներն իրենց տանը ամբողջ ներկա-

յացումներ ելին կազմակերպում: Խմբի առաջին դերա-
սանը Անտոնին եր: Վոգենը թագամը նա խաղում եր
հիվանդի ատամները քաշող բուժակի դերը: պատկե-
րացնում եր, ինչպես Տագանրովի քաղաքապետը,
իշխան Մակարուտովը յերեւում ե յեկեղեցում կամ զին-
վորական շքահանդեսին, դասախոսում եր աշխարհի
ստեղծագործության մասին, վորը ինքն եր գրել.
Կորնթյան անկորիդ չամիչն այնպես եր խառնված
հասարակ չամիչի հետ, վոր առաջին որերը վոչ մի
կերպ զանազանել չեր լինում նրանց, իսկ լուսինը
լվանում ելին լվացարարուհիները...

Զեխովի գիմնազիական դասընկեր Անդրեյ Դրոսսիի
տանը պատանիները «իսկական» թատրոն են պատ-
րաստում: Թութակներով և մեծ հազարան բլուլով
զարդարված վարագույրը հյուրասենյակը բաժանում
եր բեմի և պարտերի: Կողքի սենյակները վեր ելին
ածել դերասանական զգեստարանների: Փոքրիկ պատի
պահարանում պահվում ելիր հագուստները, կեղծամ-
ները, հին խթաններ, և այդտեղ ել դրվում ելին ներ-
կայացման համար պատրաստված կարկանդակները:

Ներկայացումներին շատ բազմություն եր հավաք-
վում: Գալիս եր հացավաճառ, հարուստ հույն բրու-
սալին, գալիս եր Միտրոֆոն Գեորգիկիչը՝ Անտոշյի
քեռին: Յերեխանները հետաքրքրությամբ դիտում ելին
նրան: Նրա անթիվ յերկրպագությունները սրբապատ-
կերներ կախված անկյունի կողմը, խաչակնքումները,
մորուքը տարորինակ ելին թվում և մասամբ վախ
պատճառում:

— Յեթե աստված որհնի, — ասում եր նա յուրա-
քանչյուր խոսքից հետո:

Հասարակությանը տոմսեր եյին տալիս՝ սպիտակը պարտերի, գորշը՝ գալյորկայի, միջանցքի: Դալշորկայում հավաքվում եյին սպասավորները՝ աղախինները, խոհաբարները, կառապանները՝ Անդրեյ Դրոստիի մոր նախկին ճորտերը, վորոնք դաստիարակված եյին խստագույն հնազանդութիւն գաղափարով: Որինակ, Աննա Ֆեոդոսինայի աղախինը չեր համարձակվում հանվել այն սենյակում, ուր կախված եր տիրուհու նկարը:

Յերեխաները հուզմունքով վառում եյին նավթի լամպերը՝ շատ անդամ ելին դերասանները ներկայացման ժամանակ ցնցում տրաքող ապակու ձայնից, Դերասանների սենյակ եր գալիս Զեխովը: Նրանից գոմի հոտ եր գալիս. Դրոստիի տանը նա սիրում եր նայել, ինչպես ե կառապան Ֆիլիպը հետևում ձիերին:

Թատրոնի ռեպերտուրը խիստ բազմազան եր: Ալսոր ներկայացնում եյին «Յերկրորդ գնդի աղջիկը» ոպերետան և հուսարական նշանազգեստ հազած գիմնազիստուհին, յեկվոր իտալական յերգչուհիների ձեռքին նմանեցնելով, յերգում եր.

Գհւնդ, իմ լետեից,
Գհւնդ, իմ լետեից:

Իսկ հետելալ անդամ բեմադրում եյին արդեն Ռոտրովսկու «Անտառը» և Զեխովը նեսչաստլիվցեկի դերն եր կատարում:

Դրոստիի տանը բեմադրվում եյին նաև Զեխովի պիեսները, Դրանք Տագանըոգի կանքից վերցրած տեսարաններ եյին, վորոնց մեջ դիտողները հաճախ ճանաչում եյին իրենց. Այդ պիեսները գրվում եյին

հատուկ տետրակներում: Ներկայացումից հետո Զեխովը միշտ վոչնչացնում եր դրանք: Զեխովի այդ առաջին ստեղծագործություններից վոչինչ չի մնացել, բացի աղոտ հիշողությունից:

Զեխովի մանկական հոգին թատրոնում եր ապաստան փնտում նպարեղենի խանութից, վոսկյա կոճակներով համազգեստ հազած «հազարըստներից», տերտերների ձեռք համբուրելուց, հոր խստություններից:

Յեկ թատրոնում արթնացավ Զեխովի հետաքըրքը բրությունը դեպի գրականությունը:

ՏԱԳԱՆՐՈԳՈՒՄ ՄԵՆԱԿ

Պավել Յեգորիչի առևտուրը վատ եր գնում: Ավելի ու ավելի հաճախ եր նա գանգատվում Պերուշկինից և Տրետյակովից: Դրանք հարուստ վաճառականներ ելին, վորոնք ձնշում եյին Պավել Յեգորիչի նպարեղենի առևտուրը: Փորձեց նա փոխադրվել հունական խանութների և սրճարանների շաբաթ: Այդտեղ գործերն ավելի վատ գնացին՝ հույները սիրում եյին հավաքվել կրպակում, ասես ակումբ լիներ այն, իսկ Պավել Յեգորիչը խիստ և անհաղորդակից բնավորություն ուներ: Անհաջող գնաց առևտուրը նաև նորերս կառուցված յերկաթուղային կայարանի մերձակայքում: Այդտեղ դժվար եր մրցել հարուստ մեծաքանակի վաճառականներ Տիտովի և Ամոսովի հետ:

Գործերը շտկելու համար Պավել Յեգորիչը մտածեց մեծ յեկամտաբեր տուն կառուցել: Փողը չբավականացրեց, կարողացավ կառուցել միայն մի տիսուր, փողոցի վրա յերեք լուսամուտ ունեցող տնակ:

Չվճարված պարտքեր առաջացան: Պավել Յեգո-

ըիշին սպառնում եր «փոսը»՝ անվճարունակ պարտապանների բանալը։ Գաղտագողի գնացք նստեց Պավել Յեգորիչը դեպի Մոսկվա։ Այնտեղ ապրում եյին նրա ավագ վորդիները։

Զեխովների տունը տիրեց մի ինչ վոր Պավելի Պարֆենտևիչ։ Կահ-կալասին տարան պարտքերի տեղ։ Դա կատարյալ քայլայումն եր. ապրելու տեղ չունեյին։ Յեվ Պավել Յեգորիչին հետեւց Յեգենիա Յակովիկ-նան փոքր յերեխաների հետ։

Անտոնը միայնակ մնաց այժմ ոտարի տանը՝ հսկելու կարողության մնացորդին և ավարտելու գիմ-նազիան։

Յերեք տարի ապրեց Զեխովը Տագանրոդում, վորտեղից հեռացել եյին ծնողները։ Յեկեղեցում յերգելը, խանութում նստելը, հոր ծեծը՝ այդ ամենն այժմ վերջ եր ունեցել։ Մանկությունը, ուր այնքան քիչ փաղաքանք կար, անցել եր արդեն։

Զեխովը մտավ նոր կյանք։ Սակայն այդ նոր կյանքը ևս թեթև չեր։ Տասնվեցամյա պատանին մնացել եր ինքն իր կամքին։ Պետք եր ապրուստի միջոց հայթայթել։

Զեխովն սկսում ե դասեր տալ Յուրաքանչյուր դասի համար նա ընդամենը մի քանի ոռոքի լեր ստանում ամսական։ Զեխովի խակ խոստովանությամբ, աղքատությունը տանջում ե նրան «ատամնացավի նման»։

Զեխովի միայնակության այդ տարիները նրա կենսագության ամենից մութը շրջանն ե։ Պահպանվել են լոկ տագանրողցիների հատ ու կտոր հիշողություններ, փոքրաթիվ գիմազիական փաստաթղթեր

և Զեխովի մի քանի նամակները՝ ծնողներին գրված։ Գիմազիստ Զեխովի նամակներն ամենեին մանկան գրած նամակներ չեն։

Խորապես հուզում ե Զեխովի առաջին, մեզ հասած նամակը։ Զեխովն այդ նամակն ուղարկել ե փոքր յեղայր Միշային։

«Ինչու յես գու քեզ անվանում «չնչին և աննշան յեղայր»։ Քո չնչինությանն ես գիտակցում։ Յեղբայր, բոլոր Միշաները չպետք ե միանման լինեն։ Քո չնչինությունը գիտակցիր գիտես վորտեղ։ Աստծու առաջ, թերես, խելքի առաջ, գեղեցկության, բնության, բայց վոչ մարդկանց։ Մարդկանց մեջ պետք ե գիտակցիլ լուր արժանապատվությունը։ ԶԲ վոր գու սրիկա չես, աղնիվ մարդ ես։ Ուրեմն հարգիր քո մեջ աղնիվ մարդուն և գիտցիր, վոր աղնիվ մարդը չնչին չե»։

Նրան, Անտոնային մանուկ հասակում քիչ չեյին ստորացըրել։ Այժմ Զեխովը պաշտպան եր կանգնում մարդկային արժանապատվության։

Շատ ավելի հետո Զեխովը գրում ե մի նշանակոր ժուռնալիստի։

«Գրեցեք հապա պատմվածք այն մասին, ինչպես մի յերիտասարդ, ճորտի վորդի, նախկին խանութպան, տիրացու, գիմազիստ և ուսանող, կրթված մեծավորներին հնագանդվելու, տերտերների ձեռներն համբուրելու, ուրիշի մտքերի առաջ խոնարհվելու ակզբունքներով, շնորհակալ լուրաքանչյուր պատառ հացի համար, բազմաթիվ անգամ ծեծված այն բանի համար, վոր դասերի հաճախել ե առանց կրկնակոշիկների, կոփմսեր ե արել, անասուններ ե տանջել, վոր սիրել ե ճաշել հարուստ ազգականների հետ, կեղծա-

վորություն ե արել հանդեպ աստծու և մարդկանց առանց զորեն կարիքի, լոկ միայն իր վոչնչության գիտակցությունից յելած, գրեցեք, ինչպես այդ յերիշտասարդը կաթիլ առ կաթիլ դուրս ե մղում իր միջից ստրուկին և ինչպես նա, մի գեղեցիկ առավոտ արթնանալով, զգում ե, վոր իր յերակներում արդեն հոսում ե վոչ թե ճորտի, այլ իսկական մարդկային արյուն»:

Զեխովը գրում ե ինքն իր մասին: Յեվ ճորտական արյունը կաթիլ առ կաթիլ դուրս ե մղում արդեն այն ժամանակ, տասնվեցամյա գիմնազիստ հասակում:

Նա շատ ե կարգում. Սերգանտեսի «Դոն-Քիշոտը» և Գոնչարովի «Թրեգատ Պալլադան», Շեքսպիրի «Տուրքեզագործությունները», Շոպենի հառերբեկի լիւսոփայական գրքերը և Հումբոլդի գիտական աշխատությունները: Կիրակի որերը նա անց ե կացնում քաղաքավին ընթերցարանում մայրաքաղաքի զավեշտական «Մարեկողա» և «Բուղիլնիկ» ժուռնալները. կարդալով:

Զեխովի մեջ վաղ ե արթնանում քննադատական հոտառությունը: Նա նամակներում սուր դատողություններ ե անում դրականության մասին: Դեռևս միքանի տարի առաջ նա տարվում եր «Քեռի Թոմասի տնակով», այժմ այդ վիպակի մասին նա ծաղրական գիտողություն ե անում.

«Լավ ես անում,—զրում ե Զեխովը Միշային,— յեթե գրքեր ես կարդում: Վարժվիր ընթերցանության: Կա ժամանակ, դու քո այդ սովորությունը կդնահատես: Մադամ Բիչեր-Մառուն քեզ լացացրել եր-

Յես նրա գրվածքները մի ժամանակ կարդացել եմ, կես տարի առաջ ևս կարդացի գիտական նպատակով և կարդալուց հետո տհաճ զգացում ունեցա, այնպիսի զգացում, ինչպիսին ունենում են մահկանացուները, յերբ չափից շատ քիչմիշ են ուտում»:

Զեխովը վոչ միայն կարդում, այլև ինքն ել զրում ե: «Հրատարակում ե» ձեռագիր զավեշտական «Զակա»¹ ժուռնալը: Ժուռնալն ուղարկում ե Մոսկվա, մեծ յեղբայրներին: Զեխովի ակնարկները յերեռում են նաև գիմնազիական «Դոսուգ»² ժուռնալում: Ակնարկներից մեկում Զեխովը նկարագրում ե Նոր շուկան՝ այնտեղ եր գտնվում Պավել Յեգորիչի խանութը:

Թատրոնով տարված, Զեխովը գրում ե «Անհայրություն» դրաման և «Ինչի մասին յերգեց հավլը» վողեկիլը:

Այդ գրվածքները Զեխովին ուղարկում ե Մոսկվա, Ալեքսանդր յեղբորը: Ալեքսանդրը դրանք տանում ե հայտնի դրամատուրգ Ս. Սոլովյէին:

— Մի ժամանակ, ով գիտե, թերեւ և բանիմաց գրող դուրս գա, — ասում ե Մոլովիը, վոդկիլը կարդալով:

Այդ տարիներին Զեխովն իր շրջապատի մարդկանց թվում եր մտախոն և ծածկամիտ: Նա շատ բարեկամներ ուներ և քիչ մտերիմ ընկերներ: Շատերը նրան համարում եյին անտարբեր: Միայն յերբեմն, յեթե վորեւ բան գրավում եր նրան, Զեխովը փոխվում եր: Աչքերը շողում եյին և Զեխովը, ժպտալով բարեսիրա կատակ եր անում:

¹ Զակա—թոթովախոս:

² Դոսուգ—պարագ ժամանակ:

Չնայած իշխանության ձեռք առած բոլոր միջոցներին, հեղափոխական արամագրությունները թափանցում ենին գիմնազիա: Բարձր դասարաններում կային ընդհատակյա հեղափոխական խմբակներ: Զեխովի ընկերներից վոմանք հետապնդվում ենին վոստիկանության կողմից, ձերբակալվում ենին, դատի ենին արգում: Տագանրոգի գիմնազիայի աշակերտ Վահվոլոդ Գոնչարովը դատապարտվեց տաժանակիր աշխատանքի:

Բուռն գեղքերը քիչ ենին հուզում Զեխովին, Քաղաքականության նկատմամբ նա այն տարիներին անտարբեր եր, բայց միաժամանակ ջերմորեն արձագանքում եր առանձին անհատների նկատմամբ տեղի ունեցած յուրաքանչյուր անարդարության: Զեխովի դասընկերների հիշողության մեջ մնացել է այսպիսի մի գեղք:

Զեխովի գիմնազիական ընկեր, ութերորդ դասարանի աշակերտ Վոլկենշտեյնը վոնդվում է զիմնազիայից այն պատճառով, վոր ապտակում է իր մոնարխիստ դասընկերոջը, վորն իրեն «ջնուդ» և անվանած լինում: Հուզված Զեխովը վազում է ութերորդ դասարան և համոզում է աշակերտներին դիմում ներկայացնել, վոր ամբողջ դասարանով կհեռանան գիմնազիայից, յեթե Վոլկենշտեյնը յետ չընդունվի: Իշխանությունը վախենում է սկանդալից, Վոլկենշտեյնին վոնդելու վորոշումը փոխվում է:

1879 թվին Զեխովը ավարտում է գիմնազիան: Գիմնազիան ավարտողները հրաժարվում են դասառուների հետ լուսանկարվելուց: Զեն ցանկանում ուսուցիչների կերպարանքներն հիշատակ ունենալ:

Այն մասին, թե ինչպես են զգում իրենց գիմնազիայից ազատված յերիտասարդները, Ալեքսանդր Զեխովը գրում է.

«Իմ հասակակիցներից շատերը դառնացած հոգով եյին թողնում գիմնազիան: Իսկ յես անձամբ, համարյա մինչև 50 տարեկան հասակս գիշերները յերազում տեսնում եյի խստագույն քննությունները, գիրեկտորի սպառնական կշտամբանքները և ուսուցիչների կովարարությունը: Դիմագիշական կյանքում յես վոչ մի միջիթարական որ չեմ ունեցել»:

Զեխովը պատրաստվում է Մոսկվա մեկնել: Նա հրաժեշտ է տալիս այն բոլոր թանգ և ատելի բաներին, վորոնք բաժին եյին ընկել իրեն իր 19 տարեկան հասակում՝ թատրոնին, նպարեղենի խանութին, գիմնազիային և տափաստանին... Նրան սպասում եք համալսարանը և ազատությունը,

Վերջին անգամ Զեխովը գնում է իր հորաքույը Մարգարիտայի մոտ: Թանի՛քանի՛ անգամ նա փախել եր նրա մոտ, յերբ տանն անտանելի յեր դառնում կյանքը:

Հորաքույը արտապում է:

— Մի տիրորիլ, — ասում է նրան Զեխովը: — Կզնամ Մոսկվա, բժիշկ կդառնամ: Կսկսենք, կսկսենք մարդագայել ապրել:

Յեղբայրները Զեխովին ման եյին ածում քաղաքում: Շատ տալիներ հետո, վերհշելով այդ որերը, Զեխովի մեծ յեղբայր Ալեքսանդր Պավլովիչը գրում են Անտոնին:

«Հիշում եմ, ինչպես մենք միասին գնում եյինք, կարծեմ, Զնամենկայով (ճիշտը չգիտեմ): Յես ցիլինդր եյի ծածկել և աշխատում եյի, վորչափ հնարավոր ե, վորպես ուսանող, քո աչքում հաղթական յերեալ: Ինձ համար, իմ այն ժամանակվա հաստկում կարեռ եր քո առաջ վորեւ կերպ հավերժացնել ինձ: Յես բղկացի մի ինչ վոր պառավի ուղիղ դեմքին, Սակայն զա քեզ վրա չթողեց այն տպավորությունը, վորը յես սպասում եյի, իմ այդ արարքը վիրավորեց քեզ: Դու զսպված կշտամբանքով ասացիր ինձ՝ «դու ելի նույնն ես, ինչ վոր կայիր»: Յես այն ժամանակ չհսկացա և դա ընդունեցի վորպես գովասանք»:

1879 թվի աշնանը Զեխովը տեղափոխվում է Մոսկվա: Նրա համար Մոսկվան արդեն նախապես սիրված քաղաք եր, Յեկային գեղի Մոսկվան ունեցած սերը տատանել չկարողացան վոչ Դրաչմկայի խուլ անկյուններն, ուր չքավորության պատճառով ապրում եյին Զեխովները, վոչ Մախավոյ փողոցի վրա գտնը վող համալսարանական շենքի մուայլությունն իր սևացած պատերով և վոստիկանական թաղամասերը հիշեցնող ուսանողական գրասենյակներով և վոչ այն, վոր Մոսկվան վոչ ծով ուներ, վոչ տափաստան...

Զեխովն ընդունվում է բժշկական ֆակուլտետ: «Դոն Քիշոտին» և «Ֆրեգատ Պալադային» փոխարինեցին բժշկական դասագրքերը: Զեխովի գրադարակի վրա յերեաց մարդկային գանգ:

ՅԵՐԱՌՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՆՏՈՇԱ ԶԵԽՈՎՆԵՑ

«Յուցակ գործերի նետ հածիվը փակված է

Գիմնազիստ Զեխովների սեղանի վրա «Դրանտ նավապետի վորդիները» գրքի հետ գտնվում եր մի հնամաշ ժողովածու «Մեղու վերնագրով: Յեղբայրները սիրում եյին «Մեղվի» մեջ դիտել նորմլը, Սուխարյեվյան աշտարակը պատկերացնող նկարները: Դա Մոսկվան եր, շատ ու շատ հեռու, տափաստանով բաժանված, վորով ճանապարհորդում ելին շաբաթներ շարունակ յեղան սայլերով:

Առաջին անգամ Զեխովը տեսնում է Մոսկվան տասնինց տարեկան հասակում, յերբ մեկնում է ծնողների մոտ, ձմեռային արձակուրդի ժամանակ: Նա զմայլելի քաղաք եր պատկերացնում, սակայն գտավ պատառություն կառապաններ, մգլած նավթի լապտերներ և անհրապույք նկուղ, ուր ապրում եր Զեխովների ընտանիքը:

Բայց և այնպես Մոսկվան դուր յեկավ Զեխովին առաջին իսկ հանդիպումից: Դուր յեկավ մոսկովյան ձյունը, աղմուկը, մարդիկ, թատրոնները:

Զեխովը ընտանիքը գտավ հոր ձնշող ազդեցությունից աստիճանաբար ազատվելու շրջանում:

Ընտանիքը Մոսկվա տեղափոխվելու սկզբնական շրջանում Պավել Յեգորիչը հաստատեց հին, տագան-րոգան կարգերը: Նա յերեխաների համար գրավոր ցուցակ կազմեց, վորը վերնագրեց այսպես՝ «Ցուցակ դործերի»: Ահա ինչ ե ասված այդ ցուցակում.

**ՑՈՒՑԱԿ ԳՈՐԾԵՐԻ
ՅԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄՈՍԿՎԱՑՈՒՄ ԱՊՐՈՂ**

**ՊԱՎԵԼ ՉԵԽՈՎԻ ԸՆՏԱՆԻՔԻ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Նիկոլայ Զեխով	Արբանում և 5-7-ին ըստ հայեցողության և ներմին ընթացի
20 տարեկան	

Իվան Զեխով	ՏԵՇԵՍԱԿԱՆ հսկողության յեվ համաձայն սույն ցուցակի
17 տարեկան	

Միխայիլ Զեխով 11½ տարեկան	Անհապաղ յեկեղեցի գեալ առավտան մամերգության ժամի 7-ին, և վաղ պատարագին 6½ ժամին, և ուս պատարագին 9½ ժամին տու ուերին:
Մարիա Զեխովա 14 տարեկան	

**ՀԱՍՏԱՏԵՑ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՅՐԸ Ի ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ:
ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՅՐ ՊԱՎԵԼ ՉԵԽՈՎ**

Թերացողը յենքարկվում է սկզբում խիստ նկատողության, իսկ հետո պատճի, վորի ժամանակ աղաղակել արգելվում է:

Կարելի յե կարծել, վոր «Ցուցակ գործերին» Պավել Յեգորիչի կողմից կատակ ե իեղել: Բայց այդպես չե:

Մեկ անգամ Զեխովը, գեռս ծագանըոգում միայնակ ապրած ժամանակ, Ալեքսանդրից նամակ ե ստանում Մոսկվայից (Ալեքսանդրը Մոսկվայում ընտանիքից առանձին ե ապրում): Ալեքսանդրը գրում ե:

«Ընտանիքի անդամ 11 տարեկան Միխայիլ Զեխովն այս որերս ինձ մոտ գալով, հայտնեց, վոր ութ րոպե ավել ե քնած մնացել և չի նայել ցուցակին, ըստ վորում հաշվի չի առնվել նույնիսկ այն արդարացումը, վոր քնած մարդը յեթե անգամ սկսի կարգալ ցուցակը (վորին կերպ), այնուամենայնիվ վոչինչ հասկանալ չի կարող: Այս առթիվ հանցավորին արգած ե բերանացի լրացում ցուցակին՝ դու վեր կաց և նայիր ցուցակին, ժամանակը չե արդյոք վեր կենալու, յեթե դեռ վաղ ե, ապա գնա և նորից պառկիր»:

Ցուցակը խախտելու համար ավելի խիստ պատիժաներ ել եյին լինում: Տասնութամյա իվանը խախտում և «տնտեսական հսկողության» ինչ վոր կանոն: Հայրը ծեծում ե նրան գրա համար բակում: Յերբ իվանը կրկին խախտում և «Ցուցակ գործերին»՝ նա սկսում ե աղաղակել: Աղաղակների վրա հավաքվում են բնակիչները: Տեսարանն այնչափ նողեալի յե լինում, վոր տան տերը սպառնում ե Յեգոր Պավլովիչին տանից վտարել, յեթե նորից այդպիսի բան կրկնվի: Մոսկվայի խուլ անկյունների բակերը շատ ուշադիր եյին սովոր...

Յեվ յերբ Մոսկվա յե գալիս Անտոնը, Պավել Յեգորիչը փորձում ե հին ձեռվ վարվել նրա հետ, սակայն վճռական դիմադրության ե հանդիպում: Տագան-

ըոգում միայնակ ապրած տարիներում Զեխովը փոխվել եր: Ամբողջ ընտանիքի համար անսպասելի հաստատակամությամբ նա այժմ պաշտպանում եր այն, ինչ համարում եր արդարացի: «Դա ճիշտ չե», «չպետք ե ստել», կտրուկ նկատում եր Զեխովը:

Պավել Յեղորիչն առանձին ե բնակվում, մոսկովյան վաճառական՝ կամակոր Գավրիլովի տանը, ընդունվելով նրա մոտ գրագրի պաշտոնի: Ընտանիքն ինքն եր հայթայթում իր ապրուստի միջոցը: Աշխատում եյին բոլորը, Նիկոլայը՝ տաղանդավոր նկարիչ՝ ծաղրանկարներ եր նկարում յերգիծաբանական ժուռների համար: Յերգիծաբանական ժուռնալներում եր աշխատում նաև Ալեքսանդրը, ամեն տեսակ «մանրմունք» բաներ գրելով: Իվանը շուտով դառնում ե ժողովրդական ուսուցիչ: Փոքրը, Միխայիլն արտագրում եր ուսանողական դասախոսություններ: Մայրը և Մաշա քույրը զբաղվում եյին տնային տնտեսությամբ: Անտոնը ևս սկսեց աշխատանք վորոնել: Նա փորձեց մեծ յեղբարների ճանապարհով գնալ՝ աշխատել յերգիծաբանական ժուռնալներում:

Պատմում են այն մասին, թե Զեխովը ինչպես ե տպագրության հանձնում իր առաջին գործը:

Զեխովների ընտանիքում պատրաստություն են տեսնում տոնելու Յեղենիա Յակովիենայի անվանակոչությունը: Տոնական կարկանդակի համար դրամ չի լինում: Անտոշան մի զգարձակի պատմվածք ե գրում և դրա համար ստացած մի քանի ոռոբլիով մոր համար կարկանդակ ե գնում:

Գուցե և ալզպես չի յեղել: Բայց ճիշտ ե այն, վոր Զեխովը կարիքից հարկադրված ե աշխատում

ժուռնալներում: Յերգիծաբանական «Ստրեկովա» ժուռնալում լույս ե տեսնում միաժամանակ յերկու գրվածք: Մեկը կոչվում եր «Դոնի կալվածատեր Ստեպան Վլագիմիր ովիչ Մ-ի նամակը գիտնական հարեւն դուք Ֆրիդրիխն» և կրում եր համեստ «... վա ստորագրությունը, Մյուսը կոչվում եր՝ «Ինչ ենք ամենից համախառնությունը վեպերում, պատմվածքներում և այլն». այդ պատմվածքում ծաղրի ելին յենթարկվում տպաշնորհ գրողների գրվածքները, վորոնց մեջ անպայմանորեն կային ընթերցողներին ձանձրույթ պատճառած կոմսուէի, հարուստ քեռի, մատախոր դեմքով բժիշկ և ծառա, վորը տիրոջ համար պատրաստ ե ամեն ինչ անելու, թեկուղ կրակի մեջ նետվելու... Այդ գրվածքի տակ ստորագրված եր՝ «Անտոշա»:

Դա Զեխովի առաջին հանդես գալն եր՝ գրականության ասպարիզում:

ԱՏԻՆՏՆԵՐ

Ութսունական թվականների յերգիծաբանական ժուռնալները թերթող ընթերցողները համախառնությունում ելին գործերի հետեւյալ ստորագրություններով՝ «Վապիչիչիվիյ շելովեկ» (դյուրաբորբոք մարդ), «Բալգաստով», «Ռուվեր», «Ռուլիս», «Վրաչ բեղ պացինտով» (հիվանդներ չունեցող բժիշկ), «Անտոնսոն», «Զելովեկ բեղ սելեկյոնկի» (փայծաղ չունեցող մարդ): Նաև՝ «Անտոշա Զեխոնտե»:

Բոլոր այդ ստորագրությունները յերեսում եյին «Ռուլոկ» և «Բուգիինիկ», «Ջրիտել» և «Մոսկվա», «Սվերչոկ» և «Ստրեկովա», «Միքսկոյ տողի» և «Սվետ ի տեսնի»՝ այն ժամանակավա բոլոր յերգիծաբանական ժուռնալներում:

Բոլոր այդ ստորագրությունների տակ թագնված եր միևնույն հեղինակը՝ Զեխովը:

Միանգամից չի հաջողվում Զեխովին տեղ գրավել էրգիծաբանական ժուռնալներում:

«Ստրեկողայում» կար «փոստարկղ» կոչված բաժինը: Այդուղ պատասխաններ եյին տպագրվում խմբագրությանն ուղարկված ձեռագրերի մասին: Հեղինակների հետ նազուտուզ չեյին անում: Որինակ, այսպիսի պատասխաններ եյին տպվում՝ «հոնորարի փոխարեն կաստորյան լուղ ընդունեցեք»:

Զեխովը «Ստրեկողայում» իրեն հասցեագրված ալսպիսի պատասխաններ ե կարգացել՝

«Սոսկալի չերազը նրանով ե միայն սոսկալի, վորանվրդով կերպով բոլորին ձանձրույթ պատճառած թեմաներ ե կրկնում»:

«Մի քանի տողը չի փրկում ծայրահեղորեն դատարկ բառախաղությունը»:

«Պատկերը չտպագրեցին: Նա մեղ չի վերաբերում»:

«Շատ յերկար ե և անգույն: Նման ե մի ինչ վոր սպիտակ թղթե ժաղավենի, վորը բերանից հանում ե չինացին»:

«Չծաղկած թառամում եք: Շատ ափսոս»,

Զեխովի ինքնասիրությունը խոցված եր կարդալով «չծաղկած թառամում եք» պատասխանը, Զեխովը ժամանակորապես դադարում ե «Ստրեկողային» նկութ ուղարկել և սկսում ե աշխատակցել այլ ժուռնալներին: Սակայն ալդտեղ ևս Զեխովը քիչ վերաբերանքներ չի կրել:

Յերգիծաբանական ժուռնալների տերերին մի բան

եր միայն հետաքրքրում՝ շահը՝ «Ստրեկողային» հրատարակիչ Գ. Կորնֆելդը կառչուկի կնիքների գործարանատեր եր: «Զրիտելի» հրատարակիչ Վ. Դավիդովը հագուստի արհեստանոց ուներ:

Յերիտասարդ գրականագետների հետ վարվում եյին ինչպես չքավոր խնդրատունների հետ:

«Գալիս ես,—պատմում ե հետագայում Զեխովը,—յերգիծաբանական ժուռնալի խմբագրատուն, պատասխանի: Խմբագիրը նույնիսկ չի դառնում քո կողմը, միայն սրիկայի մեջքն ես տեսնում—չի ընդունված»:

Ժուռնալներից վոմանք պահանջում եյին կարճ գրել, իսկ վոմանք ձեռագիրը գնահատում եյին ըստ ծանրության:

— Ի՞նչ: Սա կոչվում ե զրվածք,—արհամարհական ասում եյին խմբագիրները Զեխովին:—Վոչ, մեղ այսպիսի բաներ հարկավոր չե:—Յեզ ավելացնում եյին ծաղրական՝ Ե՞խ, գուք, Զե—խով—նե՞ր:

Դժվար եր տպագրության ընդունել տալը, բայց առավել դժվար եր տպագրված պատմվածքի համար փող ստանալը: Զեխովը յերեմն կատակով իր յերգիծաբանական մանր գրվածքներն անվանում եր «ստինտներ»: Դրանց գինը շատ ավելի չեր, քան այն «ստինտների» գինը, վոր ծախվում եր ձկնեղենի խանութներում: Տողին հինգ կոպեկ եյին վճարում Զեխովին: Ամբողջ պատմվածքը վեց-յոթ մանեթից ավել չեր արժենում: Յեզ այդ ել ստանալու համար հարկադրված եր լինում շատ ու շատ անգամ գնալ խմբագրի մոտ: Հոնարար ստանալու հեղինակները գնում եյին խմբով՝ այդպես ավելի ազգու եր լինում: Խմբագրերին բռնում եյին տանը:

Ահա մի տեսարան, վորը նկարագրել ե Զեխովի
յերգիծաբանական ժուռալների գոչակից զրող Ա. Մ.
Լազարե—Գրուզինսկին.

«— Տմնն ե,

— Տմնն ե: Խնդրում ե սպասեք:

Նստում ենք: Սպասում ենք մի ժամ, յերկու
ժամ, ապա համբերությունից յելած, սկսում ենք ծե-
ծել պատերը, դուրը: Հայտնվում ե վորեւ մի քնար-
յերիտասարդ սպասավոր, մաղերը փետրուտած և զար-
մացած հարցնում ե՝

— Ո՞ւմ եք ուզում:

— Կուրեալինին¹:

— Լավ ժամանակ եք գտել: Նա վաղուց մեկնել ե:

— Ինչպես թե մեկնել ե:

— Այսպես. յետեի մուտքով դուրս յեկավ, ձի
նստեց և մեկնեց: Ասաց, թող մի ուրիշ անգամ գան,
այժմ ժամանակ չունեմ:

Թքում ենք և խմբով հեռանում»:

Զեխովը «Նովոստի դնյա» թերթում տպագրեց իբ
«Դրամա վորսի ժամանակ» վեպը: Դրա համար Զեխո-
վին ամեն շաբաթ յերեք մանեթ սև փող ելին վճա-
րում, վորը բերում ելին լրագրավաճառները փողո-
ցից: Մեկ անգամ հրատարակիչը հրաժարվեց վճարել
նաև այդ յերեք մանեթը: Փողի փոխարեն նա առա-
ջարկեց յերձակից անդրավարտիկ վերցնել իհաշիվ
լրագրի:

Հրատարակիչներից վոմանք աշխատակիցներին
հոնորար վճարում ելին գարեջրատներում, մյուսները

¹ «Բուգիլիկ» յերգիծաբանական ժուռալի խմբագիրը.

նույնիսկ բաղանիքում: «Մոսկովսկի լիստոկի» հրա-
տարակիչ Պաստուխովը բոլոր աշխատակիցների հետ
«դու»—յով եր խոսում ե ամենալավ գրականությունը
համարում եր հրդեհների մասին գրված հողվածները:

«Ավելի լավ ե առանց անդրավարտիկի այցելու-
թյան գնալ, քան նրա մոտ աշխատել», —առում ե մեկ
անգամ Զեխովը, յերբ Պաստուխովը նրան գինետուն
ե տանում, կամենալով գրակել նրան իր լրագրում
աշխատակցելու:

Զեխովի տաղանդը սկսում են նկատելը Նշանավոր
գրող յերգիծաբան Ն. Ա. Լեյկինը Զեխովին հրավի-
րում ե «Ուկուկի»-ում աշխատելու: Դա այն ժամա-
նակվա լավագույն յերգիծաբանական ժուռալն եր:

Լեյկինը վաճառականական շատ հատկություններ
ուներ: Տոն որերին նա աշխատակիցներին նվերներ
եր ուղարկում, ասես նրանք գործակատարներ լինե-
յին, Յերգիծաբանական ժուռալի խմբագրի պաշտոնը
նա համատեղում եր յեկեղեցական յերեցփոխանի պաշ-
տոնի հետ... Այսոււմնայիվ նա գրական տաղանդ
ունեցող մարդ եր, Հայտնի գրողներից Լեյկինն առա-
ջինն եր, վոր ուղաղություն դարձրեց Զեխովի վրա:

Կարիքը հարկադրում եր Զեխովին գրել շտապ,
անընդհատ, «Թափով»: Այն ժամանակ նա տարեկան
200—300 պատմվածք եր գրում՝ համարյա որեկան
մեկ հատ: Զեխովը փորձում եր բոլոր ժանրերը՝ գրում
եր յերգիծաբանական պատմվածքներ, պատկերներ,
ընդույրական դիտողություններ, թատերական բե-
ցենդիաներ, դատական հաշվետվություններ, քրեա-
կան վեպեր, պատկերների համար մակագրություն-
ներ եր գրում, զավեշուական հայտարարություն-

ներ, ասացվածքներ, հանելուկներ, հարց ու պատասխաններ, որացուցների կոմիկական ծանոթագրություններ, լրագրական առաջնորդողներ, կեղծ պատմվածքներ եր հորինում ըստ ոտարերկրյա գրողների... ինչպես կատակով ասում եր ինքը Զեխովը՝ «Նա փորձել և ամեն ինչ, բացի բանաստեղծություն և ամբաստանություն գրելուց»:

Զեխովն ագահաբար ամեն տեղ թեմաներ եր վորոնում իր մանրունքների՝ «Ստրեկողայի» և այլ ժուռանալների «մոծակների և ճանճերի» համար։ Վորոնում եր լրագրական քրոնիկայում, ծանոթ ըեղործորների մոտ։ Տանը հայտարարել եր, վոր յուրաքանչյուր հնարովի նյութի համար 10 կոպեկ, իսկ պատմվածքների լրիվ ոյուժետի համար՝ 20 կոպեկ կվճարի։

Բայց և այնպես Զեխովը հաճախ գանգատվում եր, վոր գրելու նյութ չկա։ Կյանքը նսեմ եր, ճնշված, իսկ շատ բաների մասին ցարական ցենզուրան արգելում եր գրել։ Յերգիծաբանական ժուռանալներն աշխատում եյին խուսափել վտանգավոր թեմաներից և կառավարությանը գրգռելուց։ Չնայած դրան, ժուռանալները շարունակ լենթարկվում եյին իսկական ավերածության։ Գործը հասնում եր աներեակալելի կուրյոզների։ Արգելվում եր «կոկարդա» բառը՝ դա, իբրև թե կարող եր շոշափել ցարական բանակի պատիվը։ Արգելվում եր «ճաղատ» բառի գործածությունը՝ ցենզուրան այդ բառի գործածության մեջ տեսնում եր ակնարկ թագավորի՝ ճաղատ Ալեքսանդր III-ի մասին։

Շատ անգամ և ցենզուրան արգելել նաև Զեխովի գործերը։

«Մոտ ե այն ժամանակը, վոր «վաճառական» ասովիճանն անգամ անթույլատրելի պտուղ դառնա», գրում ե Զեխովը Լեյկինին ի պատասխան «Ուկուկիի» հերթական ավերման մասին ստացած տեղեկության։

Յերբեմն կենսուրախությունը դավանանում եր նաև Անտողա Զեխոնտելին։ «Բուդինիկի» հոբելյանական տոնակատարմանը Զեխովը հանդես ե գալիս ճառով։ Ճառը անոպատելի տրամությամբ և պարուրված լինում։ Նա խոսում է այն մասին, վոր յուրաքանչյուր տարի, և չգիտես ինչու անպայման աշնանը, յերգիծաբանները թաղում են իրենց ընկերներից մեկին։ Յերգիծաբանական ժուռանալների աշխատակիցները մահանում են, ինչպես հնդկական ցեղերը և կենգանի մնացածներն ակամայից ուզում են փախչել և վագոնավար կամ փոստատար դառնալ։

Զեխովը խոսում ե և իր բարեկամների և իր մասին։ Նա որեկան մի գործ եր գրում, բայց և այնպես չեր կարողանում հաղթահարել կարիքը։ Նա, չնայած շտապողականության, կարողացել եր արդեն բավականաթիվ մանը պատմվածքներ ստեղծել, սակայն վոչ վոք նրան իսկական գրող չեր ճանաչում։

«Գրողի ճանապարհը վոչ թե վարգերով, այլ մեխերով և ցանված», ասում եր Զեխովը։ դա վերաբերում եր նաև իր սեփական գրական բախտին։

Ուրախ բնավորությունն, այնուամենայնիվ, չեր լքում Անտողա Զեխոնտելին։ Նրա գրչի տակից ծիծաղ պոռթկող պատմվածքներ եյին դուրս գալիս։

Իսկ աշխատելու պայմանները չափաղանց դժվարին ելին։

«Գրում եմ, — հայտնում ե Զեխովը Լելինին, — ամենախայտառակ պայմաններում... Հարևան սենյակում բղավում ե հյուր յեկած ազգականի յերեխան, մյուս սենյակում հայրս կարդում ե մորս «Տպավորված հրեշտակը»...¹: Մեկը լարել ե արկղը² և յելում եմ Զքնաղ Հեղինեն... Դրող մարդու համար այս պայմաններից ել զզվելի պայմաններ ստեղծելը դժվար է: Իմ անկողինն զբաղեցրել ե հյուր յեկած ազգականը և շարունակ խոսք ե բացում բժշկության մասին... Ով ձանձրանում ե բժշկության մասին խոսելուց, խոսք ե բացում գրականության մասին»:

ԲԺՇԿ ԶԵԽՈՎ

Զեխովին գրականությունից յետ եր գցում նաև բժշկությունը, պետք եր այցելել դասախոսություններին, պետք եր այցելել հիվանդանոցները, պատրաստվել քննությունների:

Մեկ անգամ «Ռազվիչենիյե» յերգիծաբանական ժուռնալում լուրս ե տեսնում Ազաֆովոդ Յեղինիցինի պատմվածքը՝ այդ կեղծանունով գրում եր Զեխովի ավագ լեղբայրը՝ Ալեքսանդր Պավլովիչը: Պատմվածքը կոչվում եր՝ «Վաղը քննությունն ե»:

Պատմվածքում նկարագրվում եր, ինչպես «մորեխը»՝ ազգականները խանդարում են պարապել 5-րդ կուրսի բժշկության ուսանողին. մորաքույրը կանչում ե Կորբինկային՝ շնիկին, մայրիկը գանգատվում ե «սաոր» լվացարարուհուց՝ «դու գիտես, վոր լվացարարուհին չի բերել քո շապիկը վաղվա համար... ի՞նչ

¹ Ն. Ս. Լևոնյանի վեպը:

² Յերաժշտական արկղ—յերաժշտական գործիք ե.

ես հագնելու վաղը քննության գնալիս», գիմնազիստ յեղբայրը մատիտ ե վնատում, քույրը հարցնում ե, ի՞նչ ե նշանակում «հոգեբանական սուբստանցիա», «փուչ» ավագ լեղբայրը հարբած վիճակում գալիս ե դեղատոմոի... Ուսանողն այլս չի դիմանում և փախչում ե տանից:

Ազաֆովոդ Յեղինիցինի «Վաղը քննությունն ե» պատմվածքը Զեխովի կենսագրությունից մի կենդանի եջ ե: Պատմվածքի գործող անձերն հանդես են գալիս իրենց իսկական անուններով, սկսած «հերոսից»՝ Անտոն Պավլովիչից, վերջացրած Կորբինկայով՝ յերկար ժամանակ Զեխովների տանը ապրած «անմեջք շնից», ինչպես անվանում եր նրան Անտոն Պավլովի իշը

1884 թվին Զեխովն ավարտում և համալսարանը:

Զեխովների ընակարանի դռանը հայտնվում ե հետեյալ տախտակը՝

ԲԺԵԼ
Ա. Պ. Զեխով

Բժշկական գործունեյության սկզբից և յեթ Զեխովը մի քանի տառապալից բոպեներ և ապրում անուշագրության պատճառով նա մի գեղատոմաում ստորակետը միշտ չի դնում. այդպիսի գեղատոմաուլ գեղը փոխվում ե մահացու թույնի: Իր սխալը Զեխովը նկատում ե միայն տանը: Կես գիշերին նա կառք ե բռնում և սլանում քաղաքի ծայրամասը, ուր ապրում եր հիվանդը: Բարեբախտաբար գեղատոմաուլ գեղատուն ուղարկած չեն լինում:

Մեկ ուրիշ անդամ մի մեռնող կին հոգեարքի

վերջին ակնթարթին բռնում ե Զեխովի ձեռքը և այդպիս ձեռքը բաց չթողած, մեռնում ե. Այդ գեղքը Զեխովի վրա ուժեղ տպավորություն ե թողնում: Զեխովի մասին յեղած մի քանի հիշողություններում ասվում ե, վոր այդ գեղքից հետո Անտոն Պավլովիչը դոնից պոկում ե բժշկական անվանատախակը:

Յերբ Զեխովը հոչակավոր գրող ե գառնում, հրաժարվում ե բժշկական մասնագիտությունից, Սակայն Զեխովը վերջնականապես չխղեց իր կապերը բժշկությունից: Նրա գրասեղանի վրա թանաքամանի կողքին միշտ գրած եր բժշկական մուրճը: Նա ձրիաբար բուժում եր գլուղացիներին, հետեւում եր բժշկական գիտության, աշխատում եր, միջնորդում գիտական հիմնարկություններ հիմնելու, այցելում եր հիմնադրանցներ, նամակագրություն ուներ նշանավոր գիտականների հետ:

Նա հպարտանում եր իր բժշկական գիտությամբ և նույնիսկ պատրաստվում եր համալսարանում դասախոսել:

Բժշկությունը Զեխովի առաջ բաց արեց մյուս գրողների համար անմատչելի ուրույն մի աշխարհ՝ հիմնադրանցների, բժիշկների, հիմնադրի աշխարհը: Զեխով-բժշկի մասին հիշեցնում են նրա պատմվածքներից և վիպակներից շատ-շատերի հենց վերնագրերը՝ «Դեղատանը», «Բժիշկ», «Վիրաբուժություն», «Մեռած մարմին», «Տիֆ», «Ջրավախություն», «Դեղք» պրակտիկալից», «Պալատա և 6»:

ԲԱԲԿԻՆՅԱՆ ՈՐԵՐ

«Այժմ առավոտյան ժամի 6-ն ե. Մերոնք քննոծ են... Արտասովոր լուսություն ե... Ճռվողում են թոշունները և ինչվոր մի բան քերծում ե պատառների տակ...»

Գրում եմ և շարունակ լուսամուտից դուրս եմ նաև յում: Իմ աչքերի առաջ փոված ե արտասովոր տաք, փաղաքշական տեսարան՝ գետակ, հեռվում անտառ, Սաֆոնտեն, կիսելեների տան մի մասը...

Յերեկ շատ գրեցի և այժմ ուղարկում եմ: Լավ եմ աշխատումք...

Այդ նամակը Զեխովը ուղարկել ե Բարկինից: Այդտեղ, կիսելեների կալվածքում, Վոսկրեսենսկ քաղաքի մոտ, Զեխովն անց ե կացրել յերեք տարի անընդհատ:

Այդ տարիները յերջանիկ տարիներ եյին Զեխովի կյանքում: Նա հոչակ եր ձեռք բերել: Նրա գրվածքները տպագրում եյին արդեն մեծ թերթերը, Զեխովը սիրում եր Բարինի վայրերը և ամեն ինչ այլտեղ թեմա յեր թելադրում նրան՝ վոստը Վոսկրեսենսկում, հիվանդանոցը Զեկինում, միայնակ լեկեղեցին անտառի յեղբին, հարեան Բոժարովյան նորձանուտը...

Բարկինում Զեխովը վարակում եր բոլորին իր ուրախ բնափորությամբ: Նա բուխարական խալաթ եր հագնում, դեմքին մուը եր քսում և իր ընկեր, նկարիչ ի, ի. Լեխտանի հետ այդպես դաշտ եր զնում: Լեխտանն իրեն ձեացնում եր աղոթող մահմեդական: Զեխովը՝ ուղամատենչ բեղուին, Բեղուինը կրակում եր հրացանից դատարկ լիցքով, Լեխտանը վայր եր ընկնում:

Յերեկոները բարկինյան տանը ոսմանսներ եյին լուս, յերգում եր նշանավոր տեսոր Վաղիսլավլիմը: Լեխտանը նկարում եր ալբոմում, իսկ Զեխովը զավեշ-

տական մակագրություններ եր հորինում նրանց:
Սաշալի, կիսելեների դստեր ալբոմը ևս լցվեց
նկարներով: Սաշալի ալբոմում Զեխովի գրած մի վո-
տանավորն այսպես եւ սկսվում:

«Սիրելի Բարեկինի աստղիկը վառ»:

Յերբ Զեխովը մեկ անգամ ծածան ձուկ բռնեց,
Սաշան ասաց.

— Վասյան ծածան բռնեց:

Յերեխաները Զեխովին «Վասյա» ելին կանչում:
Ի վրեժ այն բանի, վոր նա Սաշալին «Վասիլիսա» յեր
անվանում:

Բարեկինի մարդկանց և բնությունը Զեխովը նկա-
րագրել եւ իր շատ պատմվածքներում: Այդ ժամանակ
Զեխովը շատ հեշտությամբ եւ գրում: Պատմվածքնե-
րից մեկը նա գրել եւ լողարանում պառկած: Մյուսը՝
գրազով, առանց վորեև ջնջումների:

«Յես գրում եյի, ինչպես թոշունը յերգում եւ,—
գրում եւ նա:—Նստում եմ և գրում... Ուրվագիծ,
պատմվածք, տեսարան գրելն ինձ համար վոչ մի
դժվարություն չուներ... Ծիծաղում ելի ինքս և ծի-
ծաղեցնում շրջապատում յեղածներին»:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԵԽՈՎԻ ՊԱՏԿԵՐԸ

Զեխովի պատկերը գծագրել եւ վ. Գ. Կոբոլենկոն
իր հիշողություններում:

«Իմ առաջ կանգնած եր յերիտասարդ և արտա-
քինից ալելի ջանելատես մի մարդ, միջահասակից
փոքր ինչ բարձր, յերկարավուն, ուղիղ դիմագծերով
և մաքուր յերեսով... Բոլոր շարժումների, ձևերի և
խոսակցության պարզությունը նրա վողջկերպարանքի,

ինչպես և գրվածքների, գերակշռող գիծն եր... Թվում
եր, նրա աչքերից շիթում և անսպառ աղբյուրը սրա-
մության և անմիջական ուրախության, վորոնցով
լի յեն նրա պատմվածքները: Յեվ միաժամանակ գու-
շակվում եր մի ինչ վոր ավելի խորը բան, վորը գեռնս
ծավալվելու յեր... Ընդհանուր տպավորությունն ամ-
բողջական եր և հմայիչ».

Իր ասելով, նա գրական աշխատանքն սկսել եր
համարյա կատակելով.

— Գիտեք յես ինչպես եմ գրում իմ մանր պատ-
մըվածքները: Ահա:

Նա դիտեց սեղանը, ձեռքն առավ առաջին պա-
տմած իրը, — ու մոխրաման եր, — զրեց իմ առաջ
և ասաց.

Ուզմում եք, վաղը պատմվածքը պատրաստ կլինի:
Վերնագիրը՝ «Մոխրաման»:

Յեվ նրա աչքերը վառվեցին ուրախությամբ:
Թվում եր, մոխրամանի վրա արդին ծնունդ են առնում
ինչ վոր անորոշ պատկերներ, գրություններ, արկած-
ներ...

Յերբ յես վերհիշում եմ այս զրույցը, փոքրիկ
սեղանատունը, ուր ինքնայենի մոտ նստած եր ծե-
րունի մայրը, քրոջ և յեղբոր համակրական ժպիտ-
ները, ընդհանրապես համախմբված, համերաշխ
ընտանիքի վողջ մթնոլորտը, վորի կենտրոնում կանգ-
նած եր այդ յերիտասարդ մարդը, հմայիչ, տաղան-
դավոր, այդպիսի, ըստ յերեսութին, ուրախ հայացքով
գեպի կյանքը, ինձ թվում եւ, վոր դա ամենից յեր-
ջանիկ, վերջին յերջանիկ շրջանն եր վողջ ընտանիքի
կյանքում»...

Զեխովն այն ժամանակ 26 տարեկան եր:

ԳԵՐԱԿԱ ՇԵՐՈՎՐԴԻ

ՎԻՊԱԿ ՏԱՓԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Գրիգորավիչի Յամակը

«Խայտաբղետ պատմվածքներ», — այսպիս կոչեց Զեխովն իր գիրքը՝ պատմվածքների ժողովածուն։ Ժողովածույի մեջ մտել եյին այն պատմվածքները, վորոնք Անտոն Պավլովիչը տպագրել եր յերգիծաբանական ժուռնալներում և լրագրերում «Ա., Զեխոնտե» ստորագրությամբ։

Ժողովածուն արդեն տպագրվում եր։ Այդ ժամանակ տեղի ունեցավ մի գեղք, վորը խորը հետք թողեց Զեխովի հոգում։

Մեկ անգամ նա նամակ ե ստանում Պետերբուրգից, Գրում եր նշանավոր գրող Դ. Վ. Գրիգորովիչը, «Թշվառ Անտոնը» հոչակավոր վեպի հեղինակը։ Նամակում ասվում եր այն մասին, ինչպիս պատահաբար լրագրում կարդալով «Ա. Զեխոնտե» ստորագրությամբ մի պատմվածք, Գրիգորովիչն ուշադրություն ե դարձնում նրա յուրահատկության և ճշմարտության վրա։ Այնուհետև նա կարդում ե այն ամենը, ինչ ստորագրված ե լինում այդ կեղծանունով...»

«... Դուք, յես հավատացած եմ, — զբում ե Գրիգորովիչը, — կոչված եք այն բանին, վորապեսդի գրեք մի քանի սքանչելի, իրոք գեղարվեստական աշխատություններ, Դուք բարոյական խոշորագույն հանցանք կատարած կլինեք, յեթե չարգարացնեք նման սպասիլիքները։ Դրա համար ահա ինչ ե հարկավոր՝ հարգանք գեպի տաղանդը, վորը հազվագեղ ե տրվում։ Թողեք շտապ աշխատանքը։ Յես չգիտեմ ձեր միջոցները. յեթե դուք քիչ միջոցներ ունեք, ավելի լավ է քաղցած մնացեք, ինչպիս մենք իր ժամանակ, պահպանեցնեք ձեր տպագրությունները մտածված աշխատանքի համար, մշակված, գրված վոչ մեկ անդամից, այլ գրված ներքին տրամադրության յերջանիկ ժամերին։»

Գրիգորովիչի կոչը խորը արձագանք դրավ Զեխովի հոգում։ Նա միշտ խուսափում եր յերկար զեղումներից նաև նամակներում, գրելով ամենից կարեռի, ամենից լուրջ և դառն ինպիրների մասին, գերադասում եր ազատվել սիրալիր և տրտում կատակով։ Բայց Գրիգորովիչին նա պատասխանեց յերկար և հուզված նամակով։ Ահա մի քանի հատված այդ նամակից։

«Զեր նամակին, իմ բարի, ջերմորեն սիրված ավետարեր, հարգածեց ինձ կայծակի նման։ Յես քիչ մնաց արտասվեյի, հուզվեցի և այժմ զգում եմ, վոր նա խորը հետք թողեց իմ հոգում։»

Յես կարծեք արբեցման մեջ լինեմ։ Ուժ չունիմ դատելու, արժանի յեմ յես այդ բոլոր պարզեին, թե վոչ կրկնում եմ, վոր նա ջախջախեց ինձ։

Յեթե յես շնորհք ունեմ, վորը պետք ե հարգել,

ապա զղջում եմ ձեր մաքուր սրտի առաջ, մինչեւ
այժմ յես չեմ հարգել այն: Յես զգում եյի, վոր ունեմ
յես այն, բայց սովոր եյի չնչին համարելու:

Մինչեւ այժմ յես իմ գրական աշխատանքին վերաբերվել եմ չափազանց թեթևամտորեն, անփույթ,
ավելորդաբար: Չեմ հիշում իմ պատմվածքներից վորեւ
մեկը, վորի վրա մեկ որից ավելի՝ աշխատած լինեմ...
ինչպես բեպորտյուներն իրենց գիտողություններն են
գրում հրդեհների մասին, այնպես ել յես գրում եյի
իմ պատմվածքները՝ մեքենանալորեն, կիսագիտակցորեն:
Գրում եյի յես և ամեն կերպ աշխատում եյի
չտալ իմ պատմվածքներում այն պատկերները, վորոնք
թանգ են ինձ համար և վորոնք յես, ասուլած
գիտե ինչու, պահում եյի և ինամքով թագցնում:

Ամբողջ հույսս ապագայի վրա յե: Յես գեռևս միայն
26 տարեկան եմ, թերես կարող կլինեմ մի բան անել,
թեպես ժամանակն արագ և վազում:

Յեկ շուտով Զեխովը ձեռնարկում ե այդ աշխատանքը: Նա դառնում է իր անցյալին, նրան, ինչ վոր
մեծ, ուրախագին և ջերմ եր նրանում:

Կուղրինյան — Սադագոյում, կարմիր Փլիգելում,
վորը նման եր վոչ այն և փոքրիկ գոյակի, վոչ այն
և պահարանի, Զեխովը գրում է իր վիպակը տափաստանի մասին:

«ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՏՆՎԵԼ Ե ՆՈՐ ԱՌԱՋԱԿԱՐԳ ԳՐՈՂ»

Զեխովը ցանկանում եր, վորպեսզի ընթերցողը
սիրի տափաստանն այնպես, ինչպես սիրում եր ինքը,

յերբ մանուկ հասակում յեղան սայլով գնում եր տափաստանով և սալում պառկած խոտի խուրձի վրա, նայում եր ամառային լերկնքին:

Զեխովը գնում ե ծագանրոգ, վորպեսզի նորից տեսնի ապազա վիպակի գործողության վայրը:

Նա Տագանրոգում չեր յեղել ութը տարի, թաղաքը նրան թվաց վողջ-վողջ թաղված: Ալգտեղ ապրում եյին նույն մարդիկ՝ գիմնազիայի տեսուչ Դյակոնովը, բարակ ու անլսելի, կալինկորի անդրավարտիկով և թաղվայի նման տափակ գլխարկով. Միտրոֆոն Գեորգիկիս քեսին՝ ցերեկը նա առևտուր եր անում խանութում, յերեկոները մեծ շքանշանը կախելով, լեկեղցի յեր գնում, հեռավոր ազգական ի ի. Լորողան, վորին Զեխովը ճանաչեց կարմիր մսուտ ծոծրակից...

Այն տունն, ուր առաջ ապրում եր Զեխովների ընտանիքը, գատարկ եր ու լքված: Զեխովը նայում եր նրան և միայն զգվանք եր գլում: Ինչպես կարելի յեր ապրել այդպիսի քաղաքում:

«Յես կարողացա հավաստիանալ, — գրում է Զեխովը հայրենիքից, — ինչպիս կեղտոտ, գատարկ, ծույլ, անզրագետ ու տխուր և Տագանրոգը: Զեկա վոչ մի գրագետ գրված ցուցանակ և կա նույնիսկ «Ճրակտիր Ռասիա»¹:

Տագանրոգից Զեխովը մեկնում ե տափաստան, մանկությունից ծանոթ ագարակները: Ալգտեղ Զեխովն ապրում ե կաղակական մի տնակում, վորը լիքն լինում դեռքերով, ինչպես վորսորդական խանութ: Դիւերում ե խուլ յերկաթուղային կայարաններում:

1 Փոխանակ «Ճրակտիր Ռասիա» (զինետուն Ռուսաստան):

Արուներ ե վորսում: Խաչեղբայր ե լինում հարսանիքի, վորը մանրամասնորեն, զուտ չեխովլան հումորով նկարագրում ե քրոջը դրած նամակներից մեկում.

«Յերեկ և առաջին որը հարսանիք եր, իսկական կազակական հարսանիք, յերաժշտությամբ, կանացի տաճային ձայներով և զայրացուցիչ հարբեցողությամբ...»

Հարսը 16 տարեկան եւ Յես խաչեղբայրություն եյի անում ուրիշի ֆրակ հագած, լայն անդրավարափով և առանց մի ճարմանդի. Մոսկվայում այդպիսի խաչեղբոր վզակոթին կտային, բայց այստեղ իս ամենից տպագորիչն եյի...

Հավանորեն շնորհիվ իմ հարբած վիճակին, այստեղի ազջիկները գտան, վոր յես սրամիտ եմ և «հանաբքչի»: Այստեղի ազջիկները խկական վոչխարների նման են, յեթե մեկը վեր կենա և զուրս գնա զահնից, ապա նբան հետեւում են և մյուսները: Նրանցից մեկը, ամենից համարձակը և խելացին, կամենալով ցույց տալ, վոր ինքն ել ոտար չե նրբակիրթ վարփեցողության և քաղաքականության, հովհարով շարունակ խփում եր ձեռքիս և ասում՝ «զե, անպիտան», ըստ վորում գեմքը շարունակում եր վախեցած արտահայտություն ունենալ»:

Զեխովն այցելում ե նաև փոքրիկ քաղաքները.

«Կրամատորովկալից Աղովյան ճանապարհով մեկնում եմ Սլավյանսկ... Գոգոյան Միրզորոդի նման մի քաղաք ե, կա վարսավիրանոց և ժամացույցների խանութ, կարելի յե հուսալ, վոր 1000 տարուց հետո Սլավյանսկում հեռախոս կլինի: Պատերին և ցանկորմաներին կալցրած են գաղանանոցի հայտարարություն-

ներ... Տները քաղցրահամբուլը և սիրալիր տեսք ունեն, բարեհամբուլը տատիկների նման, սալահատակները փափուկ են, փողոցները լայն, ոգում յասամանու և ակացիայի բույր ե կանգնած. հեռվից լսվում ե սոխակի յերգը, գորտերի կոկոցը, հաջոց, գարձոշկալի նվագ...»

Վերադառնալով Մոսկվա, Զեխովը գրում և «Տափառտանը»: Նա վորոնում ե ջերմ, քնքուչը, հոգու խորքը թափանցող բառեր, բառեր, վորոնք պատմեն ընթերցողին վոչ միայն տափաստանի մասին, այլ և այն յերջանկության մասին, վորը տվել ե տափաստանը իրեն մանկության որերին:

«Մուսաստանում հայտնվել ե նոր առաջնակարգ գրող», — բացականչում և «Տափաստանը» կարդալուց հետո նշանավոր վիպասան Գարշնը:

Իր կեղծանունը Զեխովը թողնում ե: Անտոշա Զեխոնտեն անցյալի գիրկն ե անցնում: Մուսական վրականության մեջ հանդես ե գալիս Անտոն Զեխովը, Գևորգ Շորբորդ:

ՈՒՂԵՎՈՐՈՒՒՅՑՈՒՆ ԴԵԹԻ ՍԱԽԱԼԻՆ

«Տափաստանից» հետո յերեացին Զեխովի այլ գրվածքները՝ «Իվանով» զրաման, «Առաջարկություն» վողերը, «Տիուր պատմություն» վիպակը, նոր պատմվածքները:

Դրանը լայնածավալ հոչակ են բերում Զեխովին, Քննադատներից վոմանք համառորեն շարունակում են չճանաչել յերիտասարդ գրողին: Բայց ընթերցողների և թատրոնական գիտողների համար նա արդեն մեկն է սիրված հեղինակներից:

Հոչակը Զեխովին նաև փող և բերում: Անպո-

բույն պայքարը մասեթների և կոտեկների համար,
վորից հաճախ գանգատվում եր յերիտասարդ Զեխովն,
այժմ արդեն անցյալ եր:

Զեխովը կարող եր տոնել իր հաղթանակը: Սա-
կայն հենց այդ իսկ ժամանակ նա կլանված եր
տխուր մտորումներով և մեծ, խորը տրտմությամբ:

«Բոլորը վատ են ապրում: Յերբ յես լուրջ եմ լի-
նում, ապա ինձ թվում ե, վոր գեղի մահը զզվանք
տածող մարդիկ տրամաբանական չեն: Վորչափ յես
հասկանում եմ իրերի գրությունը, կյանքը բաղկա-
ցած ե միայն սարսափներից, տարածայնություննե-
րից և գուհկություններից, վորոնք միախառնվում և
հաջորդում են միմյանց»:

Ալսպես ե գանգատվում Զեխովն իր նամակներից
մեկում:

Դրանք անձնական վշտերի և տխրության դան-
գատներ չենին. ինչ վոր ավելի լուրջ և կարեոր բան
կար թագնված դրանց մեջ: Զեխովի մեջ հիվանդա-
գին բեկում եր կատարվում: Յեվայդ բեկումը կապ-
ված եր այն տրամադրությունների հետ, վորոն-
ցով վարակված եր ուսւական հասարակության նշա-
նավոր մասը:

Սկսվում էին 80-ական թվականները՝ ռեակցիայի
խուլտարիները: Հեղափոխական ալիքի վերելքը փոխ-
վեց անկումով: «Նարոգնայա վոլյա» հեղափոխական
կազմակերպության առաջնորդները, Ալեքսանդր Խ-ի
վրա մահափորձ կատարողները, մահապատժի հյին
յենթարկված: Յերկիրը կառավարում եր իշխանատենչ
ու հարլուրակային Պորեգոնոսցել:

Ինտելիգենցիայի մեջ շփոթվածություն և գիտ-

տություն եր թագավորում: Հեղափոխության նկատ-
մամբ ունեցած նախկին հավատը, վորով ապրում եր
ուսւական ինտելիգենցիայի առաջավոր մասը 60—70-
ական թվականներին, այժմ կորչում եր: Հայտնի սո-
ցիալիստ Տիխոնմիրովը մեղայական նամակ գրեց թա-
գավորին և անցավ մոնարխիստների ծառայության: Մամուլն անզոր եր ցարական գրաքննիչների մատիտի
հանդեպ:

Ինտելիգենցիայի լավագույն մասն անձնատուր
եր լինում իրականության ճնշման տակ: Վոչնչանում
ելին տաղանդավոր գրողները: Գլեբ Ուսպենսկին/խե-
լագարվեց: Վանվուսդ Գարշինը, նա, վորն առաջին-
ներից մեկն եր շնորհավորել Զեխովի տաղանդը, անձ-
նասպան յեղավ, նետվելով աստիճաններից:

«Հետաքրքիր ե, վոր մահվանից մի չաբաթ
առաջ,—գրում ե Զեխովը Գարշինի անձնասպանու-
թյան առթիվ,—նա գիտեր, վոր վայր ե նետվելու
աստիճաններից և պատրաստվում եր այդ վախճանին:
Անտանելի կյանք: Իսկ աստիճանները սոսկալի յեն:
Յես տեսել եմ այն. մութ ե, կեղտոտ»...

Ինչ վոր վատ բան եր կատարվում նաև Զեխովի
մոտիկ բարեկամներից շատերի հետ: «Ինչ վոր վատ
բան ե կատարվում խեղճի հետ», —հաղորդում ե այդ
որերին Զեխովը նկարիչ Լիթուանի մասին: Ենովը չեր
սիսալվում: Լիթուանը շուտով անձնասպանության փորձ
ե անում:

Դեռևս մի քանի տարի առաջ Զեխովը փորձում
եր ուսւական կյանքը հաղթահարել ծիծաղով: Սակայն
այդ չեղաղացավ անել նաև նա, իբրգիծաբան Անտոշա
Զեխոնտեն, Նրա ծիծաղն այժմ ավելի ու ավելի խուլ

եր հնչում, ավելի ու ավելի տեղի յեր տալիս թախծի տուած: «Չիտկան աղքանվան» կողքին յերեաց «Թախիծը»: Չիխովն իր վաղ շրջանի պատմվածքների ժողովածուն անվանեց «Խայտարդես պատմվածքներ»: Իսկ հաջորդ ժողովածուները Զեխովն արդեն այսպես ե անվանում «Մթնշողում», «Մռայլ մարդիկ»:

«Յես,—իստորվանում ե Զեխովը,—Գարշինի նման աստիճաններից վայր չեմ նետվի, բայց չեմ գայթակվի ինձ լավագույն ապագայի հույսերով»:

Նա միիթարություն ե վորոնում փիլիսոփայության մեջ:

Հին փիլիսոփա Մարկոս Ավելիոսի «Խորհրդածություններ առանձնության մեջ ինքն իր հետ»-ը դառնում ե վերջերս գեռ «ստիճանների» անհոգ գրողի սիրած զիրքը: «Խորհրդածությունների» լուսանցքներում հայտնվում են Զեխովի բազմաթիվ դիտողությունները:

«Վո՞ղ մարդկայինը անցողիկ ե և չնչին. յերեկը ոճառի պղպջակ ե, վաղը՝ մի ինչ վոր պղնված մումիա, վորն հանկարծ փոշիանալու յե»:

Մյապես եր գրում Մարկոս Ավելիոսը և այդ խոսքերը Զեխովի հոգում խորը արձագանք ելին դտնում: Մարկոս Ավելիոսի դառն փիլիսոփայությունից Զեխովը դիմում եր լև Տոլստոյի ուսմունքին: Մեծ գրողը բացասում եր քաղաքական պայքարը և քարողում եր բարեյական ինքնակատարելագործությունը վորպես մարդկության յերջանկության միակ հանապարհը:

Դա ուսակցիոն փիլիսոփայություն եր և այն մի քանի տարի տիրում ե Զեխովին:

Բայց Զեխովն այնուամենայիլ հասկանում եր,

վոր դա, վերջի վերջո փակուղի յի: Նա տեսնում եր, ինչպես մարդիկ հրաժարվելով քաղաքական պայքարուից հանուն անձնական կատարելագործման, իրոք խղճուկ կերպով հարմարվում ելին ոռւսական իրականությանը: Նրանցից շատերին կարելի յեր վերագրել ատրճանակի հարվածով իր կյանքին վերջտված գրող Կոսորոտովի մահից առաջ ասած խոսքերը՝

«Դառն ե մտածել, ինչ կարող ելիք լինել և վորպես ինչպիսի փետրած սրիկա յես գերեզման իջնում»:

Զեխովը յելք ե վորոնում զործնական աշխատանքում և գիտության մեջ: Իսկ գիտությունը նա ըմբռնում եր, նախ և առաջ, վորպես սիրագործություն:

1888 թվին մեռնում ե նշանավոր ոռւս ճանապարհորդ Պրժեվալսկին. մեռնում ե հայրենիրից հեռու, անապատում: Զեխովն արձագանքում և Պրժեվալսկու մահվան հուզումնալից հոգվածով: Անույժ և հավատը կորցրած ինտելիգենտներին նա հակադրում ե սիրագործության մարդկանց: Զեխովը գրում ե այն մասին, վոր մի Պրժեվալսկի կամ մի Ստենլի հարյուրավոր լավ գրքեր արժեն: Այդ մարդիկ վորպերված են բարձր գաղափարով, աղնիվ են, համառ, ընդունակ են հաղթահարելու բոլոր գժվարությունները և վտանգները, պատրաստ են հրաժարվելու անձնական յերջանկությունից, հարուստ են գիտությամբ, աշխատասեր են, վարժված տապին ու ցրտին, հայրենիքի կարոտին և քայքայիչ տենդին: Դեպի գիտությունը ունեցած նրանց հավատն անհողղող ե:

«Իգուը չե,—գրում ե Զեխովը,—վոր Պրժեվալսկուն, Միկլուխո-Մակլային և Լիվինգստոնին ճանաչում ե յուրաքանչյուր դպրոցական, և իզուր չե, վոր

այն ճանապարհներով, վորով անցնում են նրանք,
ժողովուրդները լեզենդներ են հորինում»:

Չեխովն հեռու յեր այն մտքից, վորպեսզի իրեն
դասի սխրագործություն կատարող մարդկանց շարքն,
վորոնց մասին ասել եր, վոր նրանք հարկավոր են
մարդկությանն, ինչպես արեգակը։ Չուներ նա վոչ
հաստատուն կամք, վոչ պարզ նպատակ, վոչ դիմաց-
կունությունն, և նա ինքը վշտով գիտակցում եր այդ։
Բայց և իր շրջապատում յեղած ծույլ, անտարբեր,
կյանքից վախեցող, պայքարից թագնվող մարդկանց
գոյությունը ավելի յւ ավելի թվում որ Չեխովին
խղճուկ և նրանց տառապահնքները՝ գրոշի արժեք
ունեցող։

Եեվ Չեխովը վորոշում ե այնպիսի գիտական ար-
շավանքի գնալ, վորով կարելի լինի շտկել վոչ միայն
աշխարհագրական քարտեզը, այլև հասարակական չա-
րեքը։

1890 թվի վաղ գարնանը Չեխովը հայտնում է
նամակներից մեկում։

«10-15 որից կգան արտօտաները։ Բայց ավազ,
մոտեցող գարունն ինձ թվում ե ոտար, վորովհետեւ
յեւ հեռանում եմ նրանից։»

Մեկնում ե Չեխովը հեռու՝ Սախալին։ Այդ վո-
րոշումը նա ընդունում ե հանկարծ, բոլորի համար
անսպասելի։ Բարեկաֆներն սկզբում չեին հասկանում,
կատակ ե անում Չեխովն իսկապես, թե իրոք պատ-
րաստվում ե մեկնելու։

Այն ժամանակները Սախալինը ցարական աքսո-
րավայր եր։ Հեռավոր կղզին եյին քշում-բերում հան-
ցագործներին Ռուսաստանի բոլոր ծայրերից։ Սիբիր-

յան ճանապարհը զեռ զցված չեր և շղթայակապ աք-
սորականները քայլում եյին վոտքով, կտրելով ամ-
բողջ Սիբիրը, քայլում եյին ամիսներ, տարիներ...
Սախալինում նրանց սպասում եյն կարմըաքիթ-
վերատեսուչները, գանակոծությունը, ուժերից
վեր աշխատանքը... նրանք, ովքեր քշվում
եյին ժամկետով, ապրում եյին հայրենիքի, ազատու-
թյան մտքերով։ Բայց Սախալինից աքսորականները
նազգագեպ եյին վերադառնում։ նրանց փտեցնում
եյին բանտերում, վարակում եյին հիվանդություն-
ներով, մահու աստիճան մտրուկածեծ ելին անում։
Հանցագործներից շատերին գատապարտում եյին հա-
վիտենական աքսորի։

Չեխովը դժվարին ճանապարհն պիտի անցներ՝
տասնմեկ հազար վերստ, վորից մեծ մասը ձիերով։
Մինչդեռ Չեխովի առողջությունն արգեն քայլայ-
ված եր։ Նա արյուն եր թքում։

Դա յետ չզանեց նրան։

Սկսվեց այն, ինչ գոր Չեխովը կատակով անվա-
նում եր «Սախալինյան մոլուցք»։ Ամբողջ որերով նա-
թերթում եր աշխարհագրական, յերկրաբանական,
վիճակագրական, բանտաղիտական աշխատություններ։

Չեխովի մեջ կը կին արթնացավ այն հետազոտողը,
վորը մի քանի տարի առաջ մանրակրկիտ կերպով
տեղեկություններ եր հավաքում Ռուսիայում գոյու-
թլուն ունեցող բժշկումների մասին։ Համալսարանն
ավարտելուց հետո Անտոն Պավլովիչը մտադրվել եր
մի մեծ գիտական աշխատություն գրելու։

Սախալինյան իշխանությունների հաշվետվու-
թյունները և գեկուցումներն ապշեցրին Չեխովին։

Նրա առաջ բացվեց այնպիսի հանցագործությունների պատկեր, վորոնց մասին քչերը գիտելին: Զեխովն համոզվեց այն բանում, վոր կառավարությունը բարձրաբար վոչնչացրել և աքսորանքում տասնյակ հազարավոր մարդկանց և միայն բազմացրել նորանոր հանցագործներ: Յեզ զայրութով գրում ե այն մասին, վոր հասարակությունը ցարտկան այդորինակ հանցագործությանը անտարեր վերաբերմունք ե ցուց տալիս և վոչինչ չի ուղղում իմանալ Սախալինի մասին:

Յեկավ գարունը, բացվեցին գետերը և Զեխովը ճանապարհ ընկավ: Կայարանում ուղեկցողներից մեկը Զեխովի ուսից կախեց կոնյակով լցված ճանապարհորդական շիշը, պատվիրելով խմել այն միայն Խաղաղ ովկիանոսի ամիսն: Պայմանը Զեխովը կատարեց, բայց ովկիանոսին հասնելն այնքան ել հեշտ չեր:

Տյումենից հետո սկսեց, ինչպես ասում եր Զեխովը, «Ճիաթափառումը» վողջ ասիական ցամաքով: Վանդակի նման տարանտասով անցավ Զեխովը սերիյան անվերջանալի ճանապարհով: Ամեն ինչ այդտեղ թափիծ եր բերում. կատարային ամպերը, կառապանների սաստիկ հայցոյանքը, բաղի ապուրը իջևաններում, քաղաքները, վորոնք ապշեցնում եյին Զեխովին «ասիական անիրավությամբ»: Զեխովն առաջ եր անցնում աքսորականների խմբերից՝ նրանք քայլում եյին պահակների ուղեկցությամբ: Իսկ ճանապարհին հանդիպում եյին թափառաշրջիկներ՝ փոքրիկ կաթսաները ուսերին՝ գուցե փախստականներ Սախալինից...

Զրերի վարարման շրջանն եր, ճանապարհներն

հեղեղված եյին, տարանտասն անցնում եր լճակների միջով: Տոմ գետն անցնելիս Զեխովը քիչ ե մնում խեղվի: Ճանապարհորդությունը նմանվում ե յերկարատե հիվանդության: Քամուց և անձրեց Զեխովի գեմքը կարծես ձկան թևերով ե ծածկվում:

Կրասնոյարսկից այն կողմ սկսվում են անտառալին հրդեհները:

Հարյուրավոր վերստեր Զեխովի տարանտասը ընթանում և շիկացած մառախուղի միջով:

Սախալինում Զեխովը մնում ե յերեք ամիս: Աշխատում ե նա այդտեղ զարմանալի լարվածությամբ: Ամեն որ արթնանում ե լուսաղեմին, թանգ և գնահատում յուրաքանչյուր խրճիթ, զրուցում ե, յուրաքանչյուր աքսորականի և վերաբնակչի հետ:

Զեխովը ցուցակագրում ե ամբողջ սախալինյան բնակչությունը: Դրա համար նա շրջագայում ե ամբողջ կղզին, այցելում ե յուրաքանչյուր գյուղ, մտնում ե յուրաքանչյուր խրճիթ, զրուցում ե, յուրաքանչյուր աքսորականի և վերաբնակչի հետ:

Սախալինի ծերունիների մեջ մինչև մեր որերը աղոտ հիշողություն ե մնացել այն գրողի մասին, վորը Ռուսաստանից այցի չե յեկել իրենց. նա խոսել ե աքսորականների հետ, վորպես մարդկանց հետ, և դա տարորինակ, համարված հրաշալիք ե թվացել...

Սախալինը տասը հազար բնակիչ ե ունեցել և Զեխովը լրացրել ե տասը հազար վիճակագրական թերթիկ, Դա տասը հազար ծայր աստիճան ստորացման յենթարկված կյանք ե: Սախալինում տառապում եյին վոչ միայն աքսորականները: Ազատ վերաբնակչիները ևս Սախալինի մասին ասում եյին՝

«Չորս կողմը ծով ե, մեջտեղը ցավ...»

Սախալինը ներկայացավ Զեխովի առաջ վորպես
իսկական դժոխք, Յարական չինովնիկները կղզում
անպատճե կերպով ավելի ծանր հանցանքներ ելին
գործում, քան նրանք, վորոնց համար զատապարտ-
յալներն աքսոր եյին քշվում: Բայց «սախալինյան
դժոխքի» հանցանքը միայն տեղական չինովնիկների
վրա չեր ընկնում, այլ վողջ ցարական ռեժիմի:

Զեխովը մուսաստան վերաբարձավ ծովային ճա-
նապարհով, պտույտ տալով Հնդկաստանը և լողալով
Սուեզի ջրանցքը: Սախալինյան մոայլ պատկերները
փոխվեցին այնպիսի տեսարաններով, վորոնց մասին
նա յերեմն յերազել եր տագանորոդյան տնակում
«Ֆրեգատ Պալլագան» կարգավիր: Նա կտրեց Հընդ-
կական ովկիանոսը և Կարմիր ծովը, լեզավ Հոնդ Կոն-
դում և Սինդապուրում, գնացքով ճանապարհորդեց
Յելոնի արմավենիների անտառներով: Ովկիանոսում
ողանալիս, Զեխովը տեսավ նավիրն ուղեկցող ձկներ
և իրեն մոտեցող շնաձուկ:

Զինական ծովում նավը թայֆունի հանգիպեց, և
Զեխովն արդեն ատրճանակը պատրաստ պահել եր
անձնասպան լինելու, յեթե նավը խորակվեր...

Ութը ամսվա բացակալությունից հետո Զեխովը
վերադառնում է Մոսկվա: Անտոն Պավլովիչի կրտսեր
յեղբայրը մեկնում է Տուլա՝ նրան ընդառաջ: Նա Զե-
խովին գտնում է կայարանի սեղանատանը: Խիտ
բազմությունը շրջապատել եր այն սեղանը, վորի մոտ
նստած եր Զեխովը: Զարմացքով նայում եր բազմու-
թյունը Զեխովի ուղեկցին՝ տարրորինակ մի մարդու
տափակ, լայն գեմքով և արտառոց ձեր հագուստով
և ել առավել զարմանալի յերկու փոքրիկ զազաննե-

ներին, վորոնք նայում եյին ճաշողների ափսեներին:
— Սա հնդկացի՞ էն, — լսվում ելին հարցեր: — Իսկ
սրանք կապիկները են:

Հնդկացին դուրս յեկավ Սախալինի քահանա,
բուրյատ, վորը Զեխովի հետ մուսաստան եր յեկել:
Իսկ կապիկները՝ մանդումներ, վորոնց Զեխովը վերց-
րել եր Յելոնից:

Զեխովը մանգուսներին տեղավորեց իր սենյա-
կում:

Նրանք անմիջապես տեր զգացին իրենց տան մեջ.
Երենց սուր դնչիկները լիցկում եյին յուրաքանչյուր
մեկը, թերթում եյին գրքերը, վերեկց նայում եյին
վառված լամպին, քթերը խոթում եյին թերի բաժա-
կի մեջ, ձեռնոցներն ելին շուռ տալիս:

Սկզբում համբերում եյին մանգուսների արարք-
ները: Բայց շուտով պարզվեց, վոր մանգուսներից
մեկը արմավների վայրի կատու յե, վորը Յելոն-
ում ավել եյին Զեխովին մանգուսի տեղը: Արմավ-
ների կատուն շատ չար արարած դուրս յեկավ: Առանձ-
նապես, չգիտես ինչու, նա ատում եր հատակ մաք-
րողներին: Հենց վոր նրանք սկսում եյին շփել հա-
տակները, կատուն դուրս եր ցատկում պահարանի
տակից և ըսնում մաքրողի վստաքը:

Զեխովն հարկադրված յեղավ վերջ ի վերջո զա-
գաններին կենդանաբանական այգի հանձնել:

Իր ուղևորության մասին Զեխովը զբեց «Սախա-
լին կղզին» մեծ գիրքը: Այդ գրքում Զեխովը, թերեւ
ինքն ել ամբողջովին չգիտակցելով, իիստ զատավճիռ
կարդաց ցարական ռեժիմին, այնչափ ծանր ու զգվե-
լի յեր նրա նկարագրած պատկերը:

ՄԵԼԻԽՈՎՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ

Սախալին կատարած ուղերությունը մեծ լարվածություն պահանջեց Զեխովից: Այժմ ավելի հաճախ եր նա զանգատվում առողջությունից:

Զեխովը կատակով ասում էր, վոր «ցամաքել և ինչպես հին պահարանք», և այդ կատակում հնչում եր նոր, սկզբում Զեխովին վոչ յուրահատուկ անհանգստություն: Հարկավոր եր վորեւ միջոց ձեռնարկել:

Զեխովը վորոշում և թողնել Մոսկվան և բնակություն հաստատել գյուղում:

Մի ինչ վոր սնանկացած նկարիչ ծախում եր Մելիխովո գյուղի մոտ, Մոսկվայից հարկուր վերստի վրա յեղած իր փոքրիկ կալվածքը և Զեխովն շտապով, համարյա առանց տեսնելու, գնում և այն:

Միայն հիվանդությունը չեր, վոր Զեխովին քշում եր Մոսկվայից: Նա յերազում եր զբասեղանի և գրքերի, չընդհատվող աշխատանքի մասին: Շատ բան եր կուտակվել մեջ, շատ բան պետք եր զրել և Զեխովը մենակություն եր վորոնում:

Սնանկացած նկարիչը խաբերայի մեկը գուրս յեկավ: Անտառի փոխարեն կոճղեր եյին միայն ցցված անսառնները սովից ուժանպառ ելին յեղել, ձյունը հալվելուց հետո բացվեցին տրառում ամայի վալրերը: Զեխովը բնակություն հաստատեց Մելիխովոյում հաւրազատների հետ միասին և ընտանիքն ակսեց, կարգի բերել իր նոր անկյունը:

Տունը նորից վերակառուցեցին, մեծ լիճ փորե-

ցին, վորը շուտով փոխվեց ակվարիումի, այնքան ձուկ գցեցին այնտեղ, ամաններով Մոսկվալից բերելով... Բարձր ծառերի վրա սարյակների բներ կախեցին այսպիսի ղափեշտական մակագրություններով՝ «Յեղբայրը Սուրյակներ», «Դինետուն»: Իսկ բակում զբոսնում եյին յեղիպտական սրճագոյն աղավնիները: Նրանք հիշեցնում եյին այն հեռավոր ժամանակները, յերբ Զեխովը աղավնիներ եր թոցնում տականրողյան ամնիքներում...

Սկզբում Մելիխովում ամեն ինչ գրավում եր Զեխովին: Ամենից ավելի դուր եր զալիս նրան ծառ անկելը և նրանց խնամելը: Զեխովների ընտանիքի բարեկամոււիներից մեկն իր հիշողություններում Մելիխովի մասին ասում ե՝ «Զեխովները բոլորը մի զարմանալի հատկություն ունեն՝ ծաղիկները և բույսերը նրանց լառմ են և այն ամենը, ինչ տնկում են նրանք, լավ արմատակալում ե»:

Այդում պտղատու ծառեր տնկեցին, սերմերից սկսեցին աճեցնել յեղենիներ և սոճիներ, սքանչելի կաշկաչների մարգեր պատրաստեցին: Զեխովը սիրեց այդտեղ յուրաքանչյուր ծառուղին և յուրաքանչյուր ծառը: Նա հյուրերին ցույց եր տալիս պարտեղը և ասում՝ «ահա այս սոճիներն առանձնապես լավ են վերջալույսի ժամանակ», իսկ այս կազնին պետք ե դիտել մթնողին»:

Մելիխովիան ալպին հղացրեց Զեխովի «Սև վարդապետը» պատմվածքում տողեր «զարմանալի վարդերի» և «ամեն գույնի կակաչների» մասին, «սկսած պայծառ սպիտակ գույնից և վերջացրած մուրի պես ու գույնով»: Իսկ իր սիրո մասին դեպի ծառերը,

գեղի անտառը, Զեխովը պատմել ե իր «Յեռի Վանշա» պիեսում:

«Յերբ յես լուսմ եմ, ինչպես ազմկում ե իմ ձեռքով տնկած ջահել անտառը, յես գիտակցում եմ, վոր կլիման մասամբ կախված ե նաև ինձանից և յեթե հաղար տարի հետո մարդը յերջանիկ լինի, ապա դրանում փոքր ինչ ես ևս հանցավոր կլինեմ: Յերբ յես ցարասի յեմ անկում և հետո տեսնում եմ, ինչպես նա կանչում և որորվում ե քամուց, իմ հոգին հոլարտությամբ ե լցվում»:

Այսպես ե ասում պիեսալի հերոսներից մեկը՝ Աստրովը, բժիշկ, վորն ավելի տարցում ե անտառներ անկելով, քան բժշկությամբ: Զեխովը Աստրովի մեջ զրել ե իր սեփական հոգու վորոշ մասը:

Բայց սոճիները, կակաչները, ազավնիները, լճակը, այդ բոլորը միայն հանգիստ եյին: Զեխովն իր համար աշխատանոց ընտրեց այն սենյակը, վորի մեծ լուսամուտների տակով ձմեռ ժամանակ նապաստակներ ելին վաղում: Գրադարանի դարակների վրա պիպական և բժշկական գրքերը խառնվել եյին միմյանց. սեղանի վրա ճապոնական բրոնզյա և փղոսկրյա Փիգուրաներն հիշեցնում եյին Զեխովին նորերս չեռավոր Արևելք կատարած ճանապարհորդությունը. պատը զարդարում եր Զեխովի սիրած գրողի՝ Տոլստոյի նկարը:

Այդ սենյակում Զեխովը զրել ե իր մի շարք լավագույն աշխատությունները: Սկզբում լույս տեսավ «Պալատա № 6» վիպակը, գալառական բժիշկ Բագինի վողբերզական վախճանի մասին, վորին վակում են հոգեկան հիվանդանոցում լոկայն պատճառով, վոր նա

աղնիվ ե և լսելացի:

Վիպակը մեծ տպավորություն թողեց ոռւս հասարակության վրա: Բնթերցողները կուհեցին նրա խսկական իմաստը՝ հիվանդանոցն, ուր վակել եյին Ռագինին, նմանվում եր բանտի, իսկ բանտը նմանվում եր ամբողջ յերկրին, վորը կառավարում եյին չինովնիկները, նույնպիսի բութ, դռեհիկ և տղետ, ինչպիսին եյին նրանք, վորոնց ձեռքում եր գտնվուածիշիշիկ Բագինի բախտը:

«Պալատա № 6»-ի ընթերցողների մեջ եր նաև Վ. Ի. Լենինը:

«Յերբ յես յերեկ յերեկոյան ավարտեցի այդ պատմը վածքի ընթերցումը, — ասում է Լենինը իր քրոջը, — յես ուղղակի սարսափ զգացի, չկարողացա մնալ իմ սենյակում և գուրս կնացի: Եյնպես ելի զգում, վոր յես նույնպես վակիված եմ № 6 պալատայում»: (Ա. Ի. Ռուբանովա-Յելիշարովայի հիշողություններից):

«Պալատա № 6»-ից անմիջապես հետո Զեխովը Մելիխովոյում ստեղծագործում ե «Իմ կյանքը» և «Կիսահարկ տունը»:

Զեխովին աշխատանքից կտրում եյին Մելիխովոյնեկած հյուրերը: Լիկա Միղինովան, Զեխովների ընտանիքի մոտիկ բարեկամը, նստում եր դաշնամուրի տուջ և յերգում Բրագի «Վալախական լեզենդը», գրող Պոտապինկոն ջութակ եր նվագում... Մելիխովյան հյուրերի հիշողության մեջ շատ ուրախ և թանգագին ժամեր են մնացել, լի անընդհատ կատակներով, զբոսանքներով լճի ափին, յերեկոները լուսուաղալով...»

Պատահում եր, վոր Զեխովը հանկարծ անհայ-

տանում եր վերանդաչից կամ սեղանատնից իր առանձնասենյակը:

— Վաթուն կոպեկի դրեցի, —ասում եր ժպիտով, վերադառնալով հուրերի մոտ:

Դրելու միտքը վոչ մի ըոպե չեր թողնում նրանու իսկ յերբ հյուրերը պատրաստվում ելին քնելու և տանը հանգչում ելին լույսերը, Զեխովի առանձնասենյակում լույսը գեռ յերկար վառվում եր: Հետո այն ել եր հանգչում: Բայց կես գիշերին Զեխովի լուսամուտում կրկին լույս եր յերառում. գիշերն արթնանալով, նա նստում եր աշխատելու և հաճախ գրում եր մինչև առավոտ:

Մելիխովոն ուներ իր «պատմիչը»: Զեխովի հայրը, վորը ընտանիքի ավագությունը վաղուց արգեն զիջել եր Անտոն Պավլովիչին, մեղմացած, խաղաղ, իր պարապատթյան ժամերն հատկացնում եր հին գրքեր կարդալուն և որպիր դրելուն: Գրասենյակաւ յին մեծ մատյանի նմանվող գրքում որբուրին գրանցում եր նա մելիխովան կլանքի լոլոր դեպքերը: Ահա մի քանի տող այդ գրքից.

«Հուլիս 2. Յող ե: Խաղաղ: Կարելի յե յեղեմական որ կոչել»:

«Ապրիլ 30. Անտոշան, Ակտանը և Մաշան անտու գնացին: Զբոսնեցին մինչև յերեկոյան ժամի 10. Ցարասին կանաչում ե»:

«Ապրիլ 18. Անտոշան արոյկայով կախարան գնաց, իսկ այնտեղից՝ Մերսուխով, ժողովի»:

«Հունիս 3. Անտոշան շատ ձուկ բոնեց»:

Յերբեմն Զեխովը հոր որպարում գրում եր սեփական, զուտ զավեշտական տողեր, ինչպես,

«Վոչխարը թոչկոտում ե, Մարլուշկան ուրախանում»:

«Փառք աստուծո, բոլորը մեկնեցին և մնացին միայն յերկու հոգի՝ յս և տիր Զեխովան»:

«Մայրիկը յերազում այծ տեսավ կնումի վրա»:

«ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ»

Զեխովը յերեք չեր մերժում բժշկական ոգնություն ցուց տալ գյուղացիներին: Վաղ առավոտից հիվանդները գալիս ելին նրա մոտ: Զեխովը միշտ ուշագիր լսում եր նրանց և զննում, բուժում եր նշանակում, գեղորաշիք եր տալիս: Հիվանդների թիվը շատ եր և Անտոն Պավլովիչին ոգնում եր Մա-Պան (Զեխովը կատակով այդպես եր անվանում իր քույր Մարյա Պավլովնային): Բժշկությամբ Զեխովը շուտով գրավից գյուղացիության վստահությունը և սերը: Անշահասեր բժշկի և կարեկից մարդու համբավը, վորն այնպես նման չեր սովորական աղա—կալվածատիրոջ, տարածվեց Մելիխովի սահմաններից շատ հեռու: Յերբեմն Անտոն Պավլովիչի մոտ հիվանդներ ելին բերում 20—30 վերստ հեռավորությունից: Յել նրանք միշտ ել Մելիխովան տանը ոգնություն ելին գտնում, Զեխովը Մելիխովոյում տարեկան ավելի քան հազար հիվանդ եր ընդունում:

Գյուղացիության հետ ունեցած շէռմէլ Զեխովին հնարավորություն եր տալիս ավելի խորը ծան: Թանալու նլ անց կյանքին: Յերբեմն Զեխովն ամբողջ շաբաթներով զադարեցնում եր սկսած ղատամվածքի վրա աշխատելը, վորպեսզի ամբողջությամբ նվիրվի բժշկության! հասարակական աշխատանքին:

Ալլագես եր, որինակ, 1892 թվին, յերբ յերկրում խոլերա տառաջացավ: Այդ տարվա սկզբին, վաս բերքից հետո, ոկուղեց սովը, մեկը այն սովերից, վորոնք այնքան հաճախ տիրում եր ցարական Ռուսաստանի աղքատ գյուղացիությանը: Զեխովը (զեռևս Մելիխովյում) հաստատվելուց առաջ եր դա) ուղերձվում ե սովահար Նիժնդորոյիան և Վորոնեժյան նահանգները, վորակեսդի տեղում ոգնության հասնի գյուղացիներին: Նա տեսավ գյուղացիներ, վորոնք միայն թայլ եյին ուտում: Յեվ նա տեսավ բութուական բարեկործներին, վորոնք հանդիսավոր ճաշեր և սիրողական ներկայացումներ ելին կազմակերպում, սակայն հրաժարվում եյին սովյալների համար սեղանաաներ հիմնել վորովհետև «քաղցի պատկերը» նրանց ինչ վոր բանով «գուր չեր գալիս»: Դա զայրացրեց Զեխովին: Նա ինքն անում եր, ինչ կարող եր: Սաստիկ ցըտերին նա շրջագայում եր սովահար գյուղերը, ձեր եր գնում գյուղացիներին բաժանելու և մեկ անգամ հազդիվ աղատվեց մահից, թիֆիի հանդիպելով և ճանապարհը կորցնելով:

Սովին հաջորդեց խոլերան: Խոլերան մոտեցավ նաև Մելիխովին: Զեխովը շրջագայում եր հարեան գյուղերը, հիվանդների համար բարակներ եր կառուցում, գյուղացիներին դասախոսություններ եր կարդում խոլերայի գեմ պայքարելու մասին:

Զեխովի հասարակական աշխատանքը միայն բժշկականությամբ չեր սահմանափակվում: Նա կառուցում էր պարզոներ, ճանապարհներ ե անցկացնում, մասնակցում ե ժողովրդական ցուցակագրության աշխատանքներին: Զեխովի ծոցատերերում այժմ ավելի

ու ավելի հաճախ ելին հանդիպում դիտողություններ գյուղացիների, գյուղական կյանքի մասին: Դրանց մեջ ուրախագին զատ քիչ բան կար: Զեխովը տեսնում եր գյուղն այնպիս, ինչպես նա կար, իր վորջ թշվառությամբ, տգիտությամբ և ստրկական վիճակով:

Մելիխովում Զեխովը գրեց «Գյուղացիներ» վիպակը, ամենանշանավոր վիպակներից մեկը ուստական գրականության մեջ նախահեղափոխական դյուզի մասին:

«ԶԱՅԿԱՆ» ՍՈՒԼՈՒՄ ԵՆ

Մելիխովյում տարրած տարիներին Զեխովը ծանր հարկած կրեց:

Մելիխովյոյից գրած նամակներից մեկում նա պատմում է.

«Ինձ մոտ հյուր ե նկարիչ Լեհատանը: Յերեկ յերեկոյան նրա հետ գնացել եյի վորսի: Լեհատանը մի կտցար խիեց. թեկից վիրավորված, կտցարն ընկալ ջրափուը: Յես վերցրի այն. յերկար քիթ, մեծ, սեաչքեր և սքանչելի հանդերձ: Նայում ե զարժանքով: Ի՞նչ անենք նրան: Լեհատանը կնճռոտվում է, փակում է աչքերն ու բեկեկ ձայնով խնդրում՝ «սիրելիս, գլուխը խիեր հրացանի կոթին...» Յես ասում եմ՝ չեմ կարող: Նա շարունակում է ջղայնորեն ցնցիլ ուսերը, գլուխը և խնդրի: Խսկ կտցարը շարունակում է նայել զարժանքով: Հարկադրված յեղա լսել լեհատանին և սպանել թոշնակը: Մեկ գեղեցիկ սիրահարված արարած պակասեց, իսկ յերկու հիմար վերադարձան տուն և նստեցին ընթրիքի...»

Զեխովը հետազայում վերհիշեց սիրավոր թռչնաւկը, Մելիխովյան տան փոքրիկ ֆլիդելում Զեխովը գրեց մի պիես, վորն անվանեց «Չայկա», Պիեսում, ի միջի այլոց այսպիսի տեսարան կա.

«Տրեպլել (գալիս և առանց գլխարկի, ձեռքին հրացանը և սպանած չայկան) Դուք մենակ եք այստեղ:

Նինա—Մենակ եմ, (Տրեպլելը չայկան դնում են բա վոտների առաջ)

Նինա—Եյդ ինչ և նշանակում:

Տրեպլել— Յես ստորոտից յուն ունեցա այսոր սպանել այս չայկան: Դնում եմ ձեր վոտների առաջ:

«Չայկայում» Զեխովը նկարագրել երեն մոտիկ մարդկանց, պատմել եր գաղտնի զգացմունքների մասին:

«Եատ խոսք ու զրուց կա գրականության մասին, քիչ գործողություն, հինգ փութ սեր», բնութագրել ե Զեխովը պիեսը: Նա նրան «տարորինակ» եր թվում, սակայն նա սիրում եր «Չայկան»:

«Չայկան» բեմադրեցին Պետերբուրգում, Ալեքսանդրինյան թատրոնում: Զեխովը գնում է Պետերբուրգ փորձերին:

—Փլխավորը, սիրելիներս,—ասում ե նա զերասաններին, —թասերականությունն հարկավոր չե... Պարզ պետք ե ամեն ինչ... Չափաղանց պարդ...»

Բայց դերասահներից շատերը պիեսը չելին հասկանում: Յել առավել քիչ հասկացավ այն հասարակությունը՝ Պետերբուրգի չինովնիկական և վաճառական հասարակությունը՝ առաջին ներկայացմանը: Այդ հասարակությունը թատրոն եր յեկել ծիծաղելու («Չայկան» բեմադրվել եր կոմիկական դերասանունի

Լելիկենվայի բենեֆիսին, վորը խաղում եր Զեխովի պիեսից հետո բեմադրած վողեկիլում): «Չայկայի» նուրբ պոեզիան անհեթեթ յերևաց:

Պիեսը տուլեցին, դերասաններին դահլիճից շարունակ ընդէատում ելին ծաղրական դիտողություններով:

Պիեսը տապալվեց: Դերասանները շվոթվեցին և դժվարությամբ, մի կերպ խաղացին: Հեղինակը թատրոնից անհայտացավ: Յերկար թափառում եր նա այդ գիշեր պետերբուրգան փողոցներում...

Մյուս որը լրագրերը հաղորդեցին թատրոնական անլուր սկանդալի մասին: Լրագրողները ծաղրում ելին Զեխովի պիեսը, անուանելով այն «թռչնալին պիես», «անհեթեթություն», «վոչ թե «Չայկա», այլ «ուղղակի վայրի վիրս»:

Լրագրականն հոգվածներից մեկում ասվում եր՝ «Սաես միլիոնափոր մեղուներ, բոռեր, իշամեղուներ բռնեցին դահլիճի ողը, այնպիսի թունալից ուժգին եր սուլոցը»:

Նույն որն և յեթ Զեխովը մեկնեց Մոսկվա:

—Վերջացած ե,—ասաց նա, վագոնի հրապարակում կանգնած:—Այլիս պիես չեմ գրի:

Զեխովը հետազայում, այնուամենայնիվ, պիեսներ գրեց: Սակայն «Չայկայի» տապալման որն զգացած ցավը նա չուտ չմոռացավ:

Շուտով, «պատահարից» ետո, ինչպես անվանուած Ալեքսանդրինյան թատրոնում «Չայկայի» առաջին բեմադրությունը, տեղի ունեցավ մեկ այլ տխուր դեպք:

Մեկ անգամ Մելիխովյայից Մոսկվա գալիս, Զեխովը դնում է ճաշարան ճաշելու, շանկարծ ճաշի ճա-

մանակ Զեխովի կոկորդից արյուն և հոսում: Նրան փոխադրում են հիվանդանոց: Բժիշկները վորոշում են Զեխովի հիվանդությունը, վորով նա վաղուց հիվանդ եր, սակայն չեր վատահանում խոսականել ինքն իրեն: Դա թոքախտ եր:

Նրան ուղարկեցին արտասահման բուժվելու: Մեկնելու նախորյակին, Զեխովը ծանոթներից մեկի հետ ունեցած զրուցի ժամանակ խոսում և մահման մասին:

Հավանորեն նա հասկանում եր, վոր քիչ և մնացել իրեն ապրելու:

ԱՅԵՒՐՈՐԴԻ ԳԱԼՈՒԽ

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

ԴՐԵՅՑՅՈՒԽԻ ԳՈՐԾԸ

Զեխովը բնակվեց Ֆրանսիայում, Միջերկրական ծովի ափին, Նիցցայում:

Շատ բան այդտեղ գուր եր գալիս. Նրան գուր եր գալիս տաքը, փողոցային յերգիչները, ծովը, վորը թվում եր «փաղաքշական որտառուչ...»

Սակայն զրել ոտար սեղանի մոտ, ոտար սենյակում, դժվար եր իսկ տուն վերադառնալ չեր կարելի: Զեխովը շարունակում եր արյուն թքել:

«Յես մեկ անգամ տեսա Զեխովին աշխատելիս,— պատմում ե զրող վաս. Նեմիրովիչ—Դանշեկոն, վորն այդ ժամանակ ապրում եր Նիցցայում:—Մեկն ինչ

նրա սենյակում թաղված եր խավարի մեջ: Միակ լույսը մեջակում յեղած փոքրիկ լամպի կանաչ լուսամֆոփի տակ եր: Սկսված մի թերթ թուղթ: Նայում եմ. կիսամութի մեջ անկյունում հաղիկ յերեսում և Անտոն Պավլովիչը:

—Իսկույն...

Վեր կացավ, մոտեցավ սեղանին, ջնջեց տողը և կըսկին անցավ իր անկյունը:

Յես ուզեցի ձեռանալ:

—Սպասեցեք

Յերկու—յերեք ըոպե, Զեխովը կրկին սեղանի մոտ ե, արագորեն զրի առավ ինչ վոր...

—Այսոր զժվար և զրվում... Զափաղաց հեշտ ե մտածվում, թե ինչ ես զրելու: Թվում ե, մնում ե միայն արտագրել: Սակայն այդ տեղի իսկ սկսվում է մոսկովյան փողոցը: Վոաքդ կպչում ե լուրաքանչուր քարի: Իսկ յերբեմն հանկարծ, կարծեք սլանում եք յերկաթգծով, ամբողջ եցիր»:

Այն ժամանակը, յերբ Զեխովը կարող էր որեկան մեկ պատմվածք զրել, անցել եր: Գրելը դառել եր դանդաղ, լերբեմն տառապալից աշխատանք:

Ինչպես և ամեն տեղ, Զեխովը շատ լրազրել եր կարգում: Նիցցայում ապրած ժամանակ լրազրեն ամբողջովին կլանել ելին Զեխովին: Նրանցում տպվում եր Դրեյֆուսի դատավարության հաշվետվությունը: Այդ դատավարությունը գրավել եր ամբողջ աշխարհի ուշադրությունը:

Ժրանսիական զլխավոր շտաբի սպա Ալֆրեդ Դրեյֆուսը, ազգությամբ հրեա, կասկածվել եր պետական դավաճանության մեջ: Նրան դատի ելին տվել ինչ

վոր խորհրդավոր փաստաթղթերի հիման վրա, վո-
րոնք, իբրև թե, մերկացնում եյին նրան։ Դատարանը
Դրեյֆուսին դատապարտեց մշտնջենական աքսորի
հայենայում տաժանակիր աշխատանքի։

Դրեյֆուսը հանցավարտ չեր։ Նրան պաշտպան
դուրս յեկավ ֆրանսիական հոչակալոր գրող Եմիլ
Զոլան։ Նա մի բաց նամակ հրապարակեց «Ես մե-
ղադրում եմ» վերնագրով։ Զոլան կառավարությանը
մեղադրում եր կիդիքների մեջ, վորապիսիք կատար-
ված եյին Դրեյֆուսին դատապարտելու նպատակով։
Դրա համար կառավարությունը դատական պատաս-
խանառվության կանչեց նաև Զոլային։

Եեվրոպայի հասարակական կարծիքը բաժանվեց
յերկու մասի. բուրժուական հասարակության մեջ
յեղած բոլոր ազնիվ մարդիկ պաշտպանում եյին Զո-
լային և պահանջում ելին ազատել Դրեյֆուսին։ Ընդ-
հակառակը, մոնարխիստաները և հականեղափոխական-
ները բոլոր յերկրներում անամոթաբար հետամուտ
եյին լինում Դրեյֆուսին, վորովհետեւ նա հրեա եր և
հարձակվում եյին Զոլայի վրա, վորովհետեւ նա արիա-
բար պաշտպանում եր Դրեյֆուսին։

«Յես ամէն որ մի-մի գորտ եմ կուլ տալիս»,—
տառւմ եր Զոլան մոնարխիստական լրագրեր մասին։

Դրանց մեջ ամենից ավելի աշխի եյին ընկնում ոռու-
սական լրագորել և ամենից շատ «Նովոյե վրեմյան»։

Եերիտասարդության որերին Զեխովն այդ լրագ-
րում տպագրել եր իր պատմվածքները։ «Նովոյե վրե-
մյայի» հրատարակիչ աջ ժուրնալիստ Ա. Ս. Սուվո-
րինի հետ Զեխովը յերկար ժամանակ բարեկամ եր
յեղել։

Զեխովը խզում ե իր հարաբերությունները «ծերու-
նու» հետ, ինչպես նա անվանում եր Սուվորինին և նրա
«գաղանանոցի» հետ, ինչպես այսուհետեւ անվանում
եր «Նովոյե վրեմյան»։

Դա կարենոր մոմենտ եր Զեխովի կանքում։ Գետք
եր ընտրություն կատարել յերկու լագերի մեջ, և Զե-
խովը կանգնեց ազնիվ գրող Զոլայի հետ մի լագե-
րում, այլ վոչ թե մոնարխիստական ժուրնալիստ
Սուվորինի հետ։

ՄԵՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Նա ձկտում եր վերապանակ Ռուսաստան, բայց
բժիշկները Զեխովին թուլլ ելին տալիս ապրել միայն
հարավում։

Նա բնակություն հաստատեց Դրիմում, Յալթա-
յում։ Զեխովն իր համար մի փոքրիկ ամառանոց կա-
ռուցեց սպիտակ ու թեթև և շրջապատեց այն խիտ
այգով։ Զեխովը վերսկսեց իր արտաքինից Մելիխովոյի
նման առանձնացած մարդու կյանքը, վորն աշխա-
տում եր գրասեղանի մոտ և հանգստանում այգում
ծառեր խնամելով։

— Լսեցիք, — ասաց Զեխովը մի զբողի, — այստեղ
լուրագանչյուր ծառ տնկված ե իմ ներկայությամբ և,
ինարկի, թանգ ե ինձ համար։ Սակայն դա ևս կա-
րեւոր չե։ ԶԲ վոր այստեղ մինչև իմ հաստատվելը, ամայի
իեր և անհեթեթ հեղեղաներ եյին, քարքարոտ ու
տատանկով ծածկված։ Իսկ յես ահա յեկա և այդ
վայրի վիճակից գարձրի կուլտուրական, գեղեցիկ մի
վայր։

Յայց և այնպես Զեխովն այլևս մելիխովյան տարիների Զեխովը չեր Նա տռաջվա նման ծառեր եր տճեցնում, հիվանդանոցներ և դպրոցներ եր հիմնում, սակայն այդ բոլորն անում եր առանց նախկին վոգորության: Զեխովն այժմ շատ հիվանդ եր և շատ միայնակ:

Դրիմը և Յալթան նա չեր սիրում: Ամեն ինչ այդ տեղ նրան թվում եր խորթ՝ փարթամ, ասես լաքով պատած կանաչը, կեղասոս նավամատուցը, բազմաթիվ հուրանոցներն ու վարսավիրանոցները և գլխավորը, տոնական ամբոխը, «ալորտաբուջ հարուստների դնչերը» ինչպես արտահայտվել եր Զեխովն իր նամակներից մեկում:

«Յեղանակն այստեղ սքանչելի է, սակայն դա սոսկ միայն սոուս ե, իսկ ինչիս հարկավոր սոուսը, յեթե միս չկա»— գանգատվում եր Զեխովը:

Նա կարոտում եր Մոսկվային, մտերիմ մարդկանց, թատրոնին...

Որն անցնում եր աշխատանքով, յեթե այցելուները չեյին խանգարում, Զեխովն արդեն հռչակված եր և նրան այցելում եյին այնպես, ինչպես բուժավայրերն են այցելում: Մեկը մյուսի բետեվից այցի ելին գալիս նրան հագուստները խշխացնող տիկիններ, ասեղնազործած վերնաշալիկ հագած կալվածատերեր, հիացական գիմնազիստուհիներ, գավառական դերասաններ թուխ այտերով, նորից տիկիններ...

Իսկ յերեկոյան նա մենակ եր մնում և հիվանդությունը նրան անկողին եր զցում: Նա պառկում ու մտածում եր այն մասին, վոր դեռևս վաղ եւ այն ժամանակ Մոսկվայում խաղացվում ե իր պիեսակի յերկը զործողությունը:

Նրա պիեսները բեմադրվում եյին Գեղարվեստական թատրոնում: Յերիտասարդ, նոր սկիզբն առած թատրոնն սկզբում բեմադրեց նրա «Զայկան»: Պետերբուրգում, կազմոնի բեմում տապալված պիեսը Գեղարվեստական թատրոնում աղմկալից հաջողություն ունեցավ: Զեխովի մի քանի տարի առաջ ստացված վերքն առողջացավ: Բայց «Զայկան» կյանք տվեց և նոր թատրոնին, վորին վիճակված եր այնչափ մեծ զեր խաղալ համաշխարհային արվեստում: «Զայկան» թատրոնն ընդունեց վորպես իր խորհրդանիշը: Գեղարվեստական թատրոնն այնուհետև Զեխովի թատրոն եյին կոչում, իսկ Զեխովը դարձավ Գեղարվեստական թատրոնի գրամատուրդը—նրա բոլոր նոր զբաժ պիեսները բեմադրվում ելին Գեղարվեստական թատրոնում:

Մոսկվայում բեմադրվում ելին «Զայկան», «Թեռնի վանյան», «Յերեք քույրերը», իսկ Զեխովը Յալթայում եր գանվում, հնարավորություն չուներ տեսնելու իր պիեսները, վորովհետև հիվանդությունը նրան պահում եր Նրիմում:

Իսկ հետո Գեղարվեստական թատրոնում իր պիեսների բեմադրությունը տեսնելու ցանկությանն ավելացավ նաև այդ թատրոնի գերասանուհիներից մեկին տեսնելու ցանկությունը ևս:

Մեկ անգամ հեռագրիչը Յալթայում ընդունեց այսպիսի մի հեռագրիր, Մոսկվա ուղարկվող:

«Թուք բարի յեք և խելացի հրաշալի ճռվողում են թոշնակներն իմ այգում բացվել և կամելիանք»:

Հեռագրին ուղղված եր նլզա նիկոլաևնա Կնիպուրին, Գեղարվեստական թատրոնի գերասանուհուն և

կրում և 1900 թվականը:

Մեկ տարի անց կնիպպերը դարձավ Զեխովի կինը։ Նրանց բախտ անհաջող դասավորություն ունեցավ։ Զեխովը պիտի ապրեր Յալթայում, հիվանդության պատճառով, Կնիպպերը պիտի ապրեր Մոսկվայում, թատրոնի պատճառով։ Այդպիսով նրանք տեսնվում եյին յերեմնակի, այն մի քանի կարճատև շաբաթների ընթացքում, յերբ Զեխովը, ասողջությունը վտանգելով, Մոսկվա յեր զնում կամ յերբ թատրոնը թույլ եր տալիս կնիպպերին Յալթա մեկնելու։

Ֆեֆ Զեխովն առավել ևս ատեց Յալթան։ Նա իրեն բանտարկյալի վիճակում եր զգում։ Յալթան նա անվանում եր «վարսավիլների քաղաք», իսկ Դրիմը՝ «սատանի կղզի»։

ԱՆԴԱԴԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ

Հիվանդությունը, մենակությունը, կարոտը ջլատում ելին Զեխովի ուժերը։ Բայց նա աշխատում եր և ավելի խստապահանջ եր դառնում դեպի իր գրվածքների։

Զեխովի ամբողջ կյանքը յենթարկված եր գրական աշխատանքին։

Նա շարունակ դիտում եր շրջապատը կամ մըտմըտում արդեն սեազիր տողերը։

«Այդ մարդու մեջ, —զրում ե նրան ձանաչող մի գրականագետ, —բացի այն ամենից, ինչ նա ստեղծագործել ե, ակնհայտ կերպով ներքին առանձնահաշտուկ աշխատանք եր կիզվում»։

Իսկ մեկ այլ վկա ավելացնում ե.

«Զգացվում եր, վոր նա դիտում և մշտապես և ագահաբար. ինչպես լուսանկարչական ապարատները, նրա զգացողության որգանները ամրապնդում եյին հիշողության մեջ հազվագեղ տեսարաններ, արտահայտություններ, փաստեր, խոսակցություններ, ներկեր, ձայներ, բույրեր։

Իր շրջապատում նկատածներից շատ բան Զեխովը գրի լիր առնում ծոցատերում ամենաեղանակ տանը, ճաշակի ժամանակ, գիշերը, մուտքի աստիճանների վրա (նա առանձնապես սիրում եր կես գիշերին նստել մուտքի աստիճանների վրա), նավակում, դաշտում, զբունելիքին։

Յերբ ծոցատերը հետը չեր լինում, գրում եր ինչի վրա պատահի՝ թղթի կտորի, ուրիշի այցեառմսի։

Վորոշ գործեր Զեխովը մտածում եր յերկար տարիներ։ Յալթայում նա գրում ե «Թահանայապետ» վորքրիկ պատմվածքը։ Այդ պատմվածքի սյուժեն, Զեխովի իրեն խոսականությամբ, «նստած է յեղել նրա զիխում 15 տարի»։ Մինչդեռ Զեխովի գրական կյանքն ընդամենը 25 տարի յե յեղել

Ծոցատերերում գրվածները հետագայում դառնում եյին ապագա պատմվածքների և վիպակների ուրվագծեր։ Ապա նրանք միաձուլվում եյին, դառնում եյին սևագրություն՝ ամբողջապես ուղղումներով, հավելումներով, նշաններով ծածկված։

Սկսվում եր մանրակրկիտ աշխատանքը, վորը Զեխովն անվանում եր «նկարչություն», վորովհետեւ նա սիրում եր ուղղումներ անել գունավոր թանաքներով։ —Պետք ե պարզ գրել, —շարունակ կրկնում եր Զեխովը։

Նա ինքը լավ գիտեր, վոր պարզ գրելն ամենից գժվարն եւ Զեխովն աշխատում եւ, վորպեսզի պատմվածքում վոչ մի ավելորդ բառ չլինի: Ցեվնա անմինա ջնջում եր այն ամենը, ինչ նրան ավելորդ եր թվում:

Իր աշխատանքը նա այսպես եր բացատրում.

— Վորպեսզի մարմարի կտորից դեմք ստացվի, պետք եւ հեռացնել նրանից այն ամենը, ինչ դեմք չեւ:
Մի սկսնակ գրողի Զեխովն ասում եւ:

— Գիտեք ինչպես պետք եւ գրել լավ գործ ստացվելու համար: Այնպես, ինչպես ուղամանավի տախտակամածում, այնտեղ վոչ մի ավելորդ բան չկա, այլպես պետք եւ անել նաև պատմվածքում...

Զեխովը ձգտում եր հասնել այնպիսի համառոտության և արտահայտչության, վորպեսզի վորոշ Փրազաներ կարողանային փոխարինել նկարսգրությունների ամբողջ եջերի: Հաճախ նա ձեռագրում ջնջում եր ամբողջ կտորներ, փոխարինելով մի քանի հաջող բառերով:

«Համառոտությունը տաղանդի քույրն ե», ասել են ամեն անդամ:

Յեվուրախանում եր, յերբ այդ համառոտությունը գտնում եր ուրիշների մոտ, Ֆրանսիական գրող Մուպասանի կամ Լեբրմոնառվի, վորին Զեխովն առանձնապես սիրում եր:

«Յես չգիտեմ ավելի լավ լեզու, քան Լեբրմոնառվի լեզուն, — ասում եր նա հաճախու: — Յես այսպես կանեցի՝ կվերցնեյի նրա պատմվածքը և կվերլուծեյի այնպիս, ինչպես վերլուծում են դպրոցներում, — ըստ նախագասությունների, նախադասության մասերի... Այդպես ել կսովորեյի գրել»...

Զեխովը հասավ արտասովոր վարպետության և նրա գործերն իրենց վարպետությամբ չեյին դիջում կերմոնտովիլ վիպակներին և Մովասանի պատմը վածքներին: Բայց ինքը հաճախ դժգոհ եր մնում ու կրկին աշխատում եր, կարծեք արդեն ավարտված, գործերի վրա

«Արվեստագետը պիտի շարունակ աշխատի, միշտ մտորա, վորովհետև այլապես նա չի կաբող ապրել»:

«Ամեն որ պետք եւ անպայման աշխատել»:
Այսպիսի դիտողություններ Զեխովն անում եր գրողների հետ զրուցելիս: Դրանք դատարկ խոսքեր չեյին:

Մշտական աշխատանքը լցնում եր Զեխովի կյանքը, ուստի և Զեխովի արվեստը՝ տարեց տարի ավելի նուրբ, արտահայտիչ և խորն եր գառնում:

Լև Տոլստոյը լավ եւ ասել Զեխովի մասին.

«Նա տարրորինակ գրող եւ բառը նետում եւ, ասես, անպատեն, մինչդեռ ամեն ինչ նրա մոտ ապրում եւ Յեվ վորքոն խելք: Տերընք նա ավելորդ մանրամասնություններ չունի, ամեն ինչ կամ հարկավոր եւ, կամ սքանչելի»:

Տոլստոյը Զեխովին անվանում եր «պրոզայի Պուշկին»: Իսկ Պորկին ավելացնում եր՝ «վորպես վոճարն, Զեխովն անհասանելի լին:

Ի ՊԱՇՏՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԿՈՒ

Յալթայում Զեխովի մեսակություն միիթարանքը իրեն համար թանգ կամ հետաքրքիր մարդկանց հետ հանդիպելն եր: Մի ժամանակ Յալթային մոտիկ, Պասպրիում ապրում եր լև Տոլստոյը:

Չեխովը Տոլստոյի առաջ իր վողջ կյանքում կունարհվել ե վորպես մեծ արվեստագետի: Դեռևս մելիխովյան որերին Չեխովը գնում է Տոլստոյի մոտ Յանալա Պոլյանա: Յեզ այժմ ել նա մեծ հուզմունքով մեկնում եգրողի մոտ, վորի մասին մեկ անդամ ասել եր.

«Վոչ մի մարդու չեմ սիրում այնպես, ինչպես նրան»:

Դրոդ Ա. Բունինը իր հիշողություններում պատմել ե այն մասին, թե ինչպես Չեխովը մեկ անդամ պատրաստվում է Տոլստոյի մոտ գնար Չեխովը համարյա մի ժամ մտածում եր ինչպիսի անդրավարտիկով գնա Տոլստոյի մոտ:

Ակնօցները հանեց, յերիտասարդացավ և կատակները միախառնելով իր հոգու խորքում յեղած լրջության հետ, շարունակ դուրս եր գալիս ննջարանից մերթ մեկ մերթ ուրիշ անդրավարտիկով:

—Վոչ, սա անվայիլ նեղ ե,—ասում եր նա:—Կմտածի, վոր թեթևողիկի մեկն եմ:

Յել գնում եր հագնելու ուրիշը ու կրկին դուրս գալիս, ծիծաղելով.

—Իսկ սա Սև ծովի լայնությունն ունի, կմտածի անզգամ մարդ եմ:

Գասպրիում Չեխովը յերկար զրույց ունեցավ Տոլստոյի հետ առանձին: Յել Տոլստոյի մոտից դուրս գալուց հետո առանձնապես լուրջ եր ու լուակաց:

Բարեբախտաբար Չեխովի մոտ ևս յերբեմն այցելության ելին գալիս վոչ թե այցելուներ, այլ բարեկամներ:

Յանկալի հյուրերից մեկը յերիտասարդ Մաքսիմ Գորկին եր:

Հետաքրքրությամբ և համակրանքով եր հետևում Չեխովը Գորկու աշխատանքին:

Իր մահից քիչ առաջ Չեխովը պաշտպան դուրս յեկավ Գորկուն: Դա հոչակավոր «ակադեմիական» ինցիդենտն եր:

1902 թվին Գիտությունների Ակադեմիան Մաքսիմ Գորկուն Ակադեմիայի պատվավոր անդամ ե ընտրում: Պորետար և հեղափոխական, շարունակ ձերբակալվող և աքսորվող Մաքսիմ Գորկու ընտրությունը զայրացնում է կառավարական շրջաններին: Ընտրությունների մասին գեկուցվում ե Նիկոլայ Ռին: Յարն այսպիսի մակագրություն ե անում:

«Ավելի քան տարրինակ ե»:

Դա բավական է լինում, վորպեսզի ընտրությունն անվագեր համարվի: Իմպերատորական Ակադեմիան վախկոտ լրում ե:

Մակայն յերկու պատվավոր անդամ չեն լրում: Դրանք եյին գրողներ Վլադիմիր Կորոլենկոն և Անտոն Չեխովը: Նրանք բողոքեցին և գեմունտրատիվ կերպով հրաժարվեցին ակադեմիկոսի կոչումից,

«ԱՄԵՆ ԻՆՉ ՎԵՐՋԱՑԱԾ Ե»

Չեխովի հանդես գալը Գորկուն պաշտպանելու, պատահական չեր:

Մոտենում ելին 1905 թվի հեղափոխական որերը: Մոսկվայում, Կիևում և այլ քաղաքներում խոշոր հեղափոխական ցույցեր ելին տեղի ունենում: Գյուղացիները Ուկրայնացում հրդեհում եյին կալվածատերերի ագարակները:

Հնդկանուր գործադուլը ընդգրկեց Ռուսաստանի ամբողջ հարավային մասը:

Այդ գեղքերի արձականքները հասնում եյին Յալթայի ամառանոցը: Զեխովը նոր տրամադրություններով եր վարակվում:

—Անցկացրինք մենք գորշ դանդաղաշարժ կյանք, — ասում եր նա: — Երջադարձ ե գալիս... Տեսեք, ինչ ե լինելու յերկու՝ լերեք տարուց..., Զեք ճանաչի Ռուսաստանը...

Նրա մեջ յեղած նախկին մեղմությունը և համբերատարությունն անհայտացան, յերբ այժմ նա խոսում էր նրանց մասին, վորոնք կառավարում եյին Ռուսաստանը:

—Դուք գետ չգիտեք ինչ սրիկաներ են նրանք, — բացականչում եր նա:

Իր նախկին գրվածքներն այժմ Զեխովին թվում ելին «Հնացած»: Նա վորոնում ե նոր խոսքեր առույթ և ուղախպին:

Զեխովն այդ խոսքերը գտնում ե իր վերջին աշխատություններում՝ «Հարսնացու» պատմվածքում և «Բալենու այգին» պիհուում:

1904 թվի հունվարի 17-ին, Զեխովի ծննդյան որը, «Բալենու այգին» առաջ անգամ բեմադրվում ե Գեղարվեստական թատրոնում, Թատրոնը վորոշում և մեածքել իր սիրելի հեղինակին:

Մահացու գունատ ունիհարած կանգնել եր Զեխովը բեմում: Նրան վողջունում եյին ձիգ ու ծորուն ձառներով: Զեխովը մուալլիվում եր և մեծարանքը շատերի համար թաղման եր նմանվում:

Նրանք չեյին սխալվում: Զեխովի առողջությունը

որեցոր վատանում եր: Բժիշկները խորհուրդ եյին տալիս Զեխովին արտասահման մեկնել:

—Մեռնելու յեմ զնում, — ասաց նա հրաժեշտիպահին գրող Ն. Դ. Տելեշեվին: — Ամեն ինչ վերջացած ե, Այլևս չենք տեսնվի:

Յեզ պարզեց նրան թույլ, մոմի նմանվող ձեռքը: Կինը Զեխովին տարավ Գերմանիա, Բաղենվեյլեր կուրորտը:

Մի յերեկո Զեխովն իրեն լավ ե զգում: Նա սկսում ե մտածել մի ուրախ պատմվածք, նկարագըրելով նորածե կուրորտն, ուր ուրախ, կարմրաթուշ տնզվացիները և ամերիկացիները զբոսանքից վերադառնում են հյուրանոց ընթրիքի և հանկարծ պարզվում ե, վոր խոհարարը փախել ե և վոչ մի ընթրիք ել չկա...

Գիշերվա սկզբում Զեխովն արթնանում ե և կյանքում առաջին անգամ ինքը խնդրում ե ուղարկել բժշկի յետեից:

—Մեռնում եմ, — ասաց նրան Զեխովը գերմաներեն: Հիվանդին ամրապնդելու համար բժիշկը հրամայում ե շամպայն տալ: Զեխովը խմում ե գավաթը և ժպտում կնոջը:

—Վաղուց շամպայն չեյի խմել:

Մի քանի ըովելից նա այլևս չկար:

ԴԼՈՒԽՍ ԾՈԹՆՐՈՌԴ:

ԱՆՑԱԼԸ ՄԵԼԱԴՐՈՂԸ

Զեխովը մահից քիչ ժամանակ առաջ առում ե,

— ինձ կկարգան միայն յոթը տարի, իսկ ապրելու յեմ ել ավելի պակաս, վեց տարի:

Նա սիսլում ե և այն ել կրկնակի: Ապրեց նա քիչ: Բայց կարդում են Զեխովին նաև այժմ, յերբ նրա մահից ավելի քան յերեսուն տարի յե անցել: Կարդում և սիրում են ավելի ու ավելի ուժգին:

Յեկ ծիծաղի և տիսրության և զայրույթի մեջ Զեխովը ճշմարիտ ե յեղել մինչև վերջը: Նա պատրաստ եր զիջել իր պատմվածքների հետաքրքրաշարժությունը, բայց վոչ նրանց ճշմարտությունը:

—Նախ և առաջ, բարեկամներս,—ասում եր Զեխովը, — չպետք ե ստել... Արվեստն առանձնապես նրանով ե լավ, վոր նրա մեջ չի կարելի ստել...

Զեխովի խոսքի ճշմարտության մեջ ե այդ նշանավոր արվեստագետի գաղտնիքը: Նրան բոլորից առաջ ճանաչեցին յերկու մեծ լնթերցող՝ և՛ Տոլստոյը և Մաքսիմ Գորկին:

Գորկին գրել ե Զեխովի մասին.

«Նրա տաղանդի սարսափելի ուժը հատկապես կայանում ե նրանում, վոր նա յերեք վոչինչ չի հնարում իրենից, չի պատկերացնում այն, ինչ գոյություն չունի աշխարհում»:

Իսկ Տոլստոյը նկատել ե.

«Գլխավորը, նա մշտապես յեղել ե անկեղծ, իսկ դա գրողի խոշորագույն արժանիքն ե, իսկ շնորհիվ իր անկեղծության, Զեխովը ստեղծել ե գրելու նոր, միանդամայն նոր ձեեր»:

Դա ճիշտ եր. Զեխովը գրականության մեջ ստեղծել ե նոր ձեեր: Նա նկարագրում ե բնությունը, մարդկանց, քաղաքներն այնպես, ինչպես մինչ Զեխովը չեն նկարագրել. ամբազնդել ե ուստական գրականության մեջ կարճ պատմվածքը՝ «ափի մեծությամբ», հարստացրել ե թատրոնը մարդկային զգաց-

մունքների նրբին լեռագներով, վորոնք խույս են տվել մյուս զբանատուրգներից: Բայց այդ բոլոր նորը ծնունդ ե առել չեխովյան նույն այն ճշմարտությունից: Այդ ճշմարտության շնորհիվ Զեխովն ունի լեզվի զարմանալի պարզություն, զգացմունքների խորություն և լրջություն, վորը սիրում է նա մեղմացնել ժպտով: Յեկ այդ պատճառով չե արդյոք այնպիս բարձր գնահատել Զեխովին լենինը, վորը սիրով վերսահն կարդում եր չեխովյան պատմվածքները հեղափոխության ամենաղժվարին ժամանակներին, 1917 թվին:

Զեխովին կենդանության ժամանակ հաճախ կշտամբում եին այն բանում, վոր նա իր տաղանդը մանրացնում է մանր պատմվածքներով: Թերևս իր քննադատներին ե հիշել Զեխովը, յերբ Փրանսիական գրող Ալֆոնս Դողեյի մոտ հանդիպել ե այսպիսի տողերի:

«Ինչու քո յերգերն այդչափ կարճ են, —հարցնում են մեկ անդամ թոշնածին, —Թե՞ քո շունչը չի բավականացնում:

—Յես շատ յերգեր ունեմ և կցանկանայի բոլորը հաղորդելու:

Այդ տողերը մնացել եյին Զեխովի հիշողության մեջ և նա գրի յեր ասել իր ծոցատերում: Զեխովը շատ բան ուներ ասելու: Նա ճանապարհորդել եր ուկրայնական տափաստանով և սիրերյան տայգայով, ապրել եր գավառական քաղաքներում և գյուղերում, բուժել մոսկովյան լրագրողներին և մելիխովյան գյուղացիներին, գրագրություն եր ունեցել սկսնակ գրողների և նշանավոր գիտնականների հետ, հաճախել եր թատրոնների կուլիմները, հոգեբուժական հիվանդանոցները, զբույց եր ունեցել գաճառականների

և չինովնիկների հետ, դիտել եր ուսանողներին և գոբ-ծակատարներին։ Ռուսական կյանքի հսկայական ձանաշողություն ե ունեցել Զեխովը և նա կամեցել ե «բոլորը հաղորդել»։

Բայց և այսպես չկարողացավ՝ մահը ընդհատեց չեխովյան շատ ու շատ ծրագրերը։ Նոր պատմվածքների ու պիեսների խոհերով եր ապրում Զեխովը մինչև իր կյանքի վերջը։ Բաղենվերլեյում նա յերազում եր մի պիեսի մասին, վորի մեջ գիտնականը մեկնում և Արկտիկա։ Նա պատկերացնում եր բեվկոռային գիշերը, հյուսիսափայլը... Բայց պիեսը մնաց չգրված։ Հանգան նաև տասնյակ այլ մտադրություններ։

Զեխովը մեռավ ծերության չհասած, 44 տարեկան։
Բայց և այսպես շատ բան եր գրված, շատ բան եր ասված։

Զեխովը սիրում եր քրքրել ամեն տեսակի տեղեկատուներ։ Նրա Յալթայի կարինետում կային «Վողջ Պետերբուրգը», «Վողջ Մոսկվան» և «Վողջ Ռուսաստանը» տեղեկատուները։ Զեխովի յերկերի ժողովածուն և կարելի յեր կոչել «Վողջ Ռուսաստանը», այնպես լրիվ կերպով ե անդրադարձել նրանցում ամբողջ յերկիրը։ Բայց տեղեկատուները տարեցաւը հնանում ելին և մեռնում, իսկ մեծ արվեստագետի ստեղծած «Վողջ Ռուսաստանը» մնում ե եպօխակի կենդանի հիշատակ։

«Ինչի՞ մասին գրել, ինչպիսի սխրագործություններ յերգեր։ Սխրագործություններ չկան, նրանց տեղը գրավել ե հուսահատ լարազարությունը։ Հերոսներ չկան, նրանց տեղ գրավել են մարդիկ, վորոնց ծնկները դողում են, ի՞նչ ե մնում... ըստ յերեվութին

մնում ե տիսրել ձեզ հետ միասին, մնում ե դառնալ հառաջանքների պատմագիր»։

Դա գրել ե Զեխովի մեծ ժամանակակից՝ ծերունի Սալտիկով-Շչեդրին։

Յեվ Զեխովը յեղել ե «հառաջանքների պատմագիրը», քայլաված ու ճնշված ինտելիգենցիայի պատկերացնողը։ Բայց պատկերելով նրանց, Զեխովն ամենից քիչ եր հրավիրում ընթերողներին զգացվելու և արտավելու իր հերոսների վրա։

Զեխովի ժամանակակից բուրժուական ինտելիգենցիան նրան հայտարարեց իր պոետը, անվանում եր «մթնչողի յերգիչ»։ Նա չեր ցանկանում նկատելայն, վոր Զեխովը, պատկերելով ինտելիգենցիայի ներկայացուցիչներին՝ անպետք մզկտացողներին, ավելորդ մարդկանց, զգացմունքների և զառամյալ մաքերի տեր մարդկանց, իր այդ հերոսներին վերաբերվում եր խիստ բացասական։ Նա ինտելիգենցիային անվանում եր յերկերսանի, կեղծ, հիստերիկ, անկիրթ, ծույլ։ Նա վրում եր այս մասին, վոր չի հավատում նրան «նույնիսկ, յերբ նա տառապում ե ու գանգատվում, վորովհետեւ նրան ճնշողները իր իսկ ընդերքից են գուրս գալիս»։

Այսպես կոչված լիբերալ, «ազատասեր» բուրժուական ինտելիգենցիայի կեղծալորությունը զայրացնում եր նրան։ Զեխովը մեկ անգամ ներկա յե գանվում մոսկովյան և կոնտինենտալ ճաշարանում տեղի ունեցած հանդիսավոր մի ժողովին։ Լիբերաները տոնում եին ճորտության վերացման տարեդարձը։ Խոսում եյին ազատության, ժողովրդի մասին և հարբած շարժումներով սեղանից վայր ելին գլորում շամպայնով

մի շները, ահեղ հրամաններ արձակելով ֆրակ հանգած լակեյներին։ Այդ պարոնների սպառնազին առղերը Զեխովը զբի յե առնում իր ծոցատերում։

«Մենք հոգնել ենք գերությունից և կեղծավորությունից», ասում եր նա։

Զեխովը չեր նմանվում իր հերոսներին։ Զեխովյան հերոսներն անգործունյա եյին՝ Զեխովն ամբողջ կյանքում աշխատել ե հսկալական լրավաճությամբ։ Զեխովյան հերոսներն ընդունակ չեն գործնական աշխատանքի՝ Զեխովը կազմակերպել ե հիվանդանոցներ, դպրոցներ, գրադարաններ և մուլեյներ, ողնություն ե ցուց տվել սովորակներին և աքսորականներին, լրջորեն զբաղել ե գիտությամբ, ուսմասիրելով վոչ միայն բժշկությունը, այլև բնական գիտություններ, աշխարհագրություն, վիճակագրություն և այլն։ Զեխովյան հերոսներն ապրում են գորշ և գժվար, արտասովոր թեթեությամբ համատեղելով լավ ապագայի անիմաստ յերազանքները փնթի, կեղտու, այլ և հաճախ ուղղակի ստոր գոյության հետ։ Իսկ Զեխովը բազմազան, վառ և հետաքրքիր կյանք եռւնեցել։

«Կանքը թվում ե մեծ, հսկայական, բայց նստած ես հինգ կողեկանոցի վրա»։ Զեխովի ծոցատերում յեղած այս դիտողությունը վերաբերվում ե չեխովյան հերոսներին, բայց վոչ յերբեք իրեն՝ Զեխովին։ Մինչ չեխովյան հերոսները թեյ եյին խմում և հառաջում, Զեխովը շուրջաշխարհյա ճանապարհորդություն եր կատարում, անձնազոհ աշխատում Սախալինում, մասնակցում հասարակական շատ գործերի և յերբեմն միայն գանդատվում, վոր անբուժելի հիվանդությու-

նը, թոքախտը թույլ չի տալիս իրեն ելավելի յեռուն և բովանդակալից կյանքով ապրելու։

«Եեքսպիրյան սքանչելի չարագործներից հետո տեսնել այն մանրիկ, զրոշանոց սրիկաներին, վորոնց պատկերում եմ յես, ամեննեին ախորժելի չե»։

Ալգակս եր արտահայտվում Զեխովն իր գործող անձերի մասին վոչ թե ն ըանց յիրգիչը, այլ նըանց մերկացնողն եր Զեխովը։

Զեխովը ոռւսաստանյան քաղքենու անհաշտ թշնամին եր։

«Լավ, մարդավայել ապրելու համար,—ասում եր նա, —չե վոր հարկավոր ե աշխատել։ Աշխատել սիրով, հավատով։ Իսկ մեղանում այդ չգիտեն։ Մեկ—յերկու կարգին տուն կառուցած ձարտարապետը նստում ե թուղթ խաղալու և խաղում ե ամբողջ կյանքում... Պրակտիկա ունեցող բժիշկը դադարում ե գիտությանը հետեւել.. Յես չեմ հանդիպել վոչ մի չինովնիկ, վորը քիչ թե շատ հասկանա իրաշխատանքը. սովորաբար նա նստած ե մայրաքաղաքում կամ նահանգական կենտրոնում։ Թղթեր ե հորինում և ուղարկում Զմիկիլ և Սմորգոն կատարելու։ Իսկ թե այդ թղթերն ում են զրկելու շարժման ազատությունից Զմիկում և Սմորգոնում, ալդ մասին չինովնիկը նույրան քիչ և մտածում, ինչպես աթեխտը գեհենի տանջանքների մասին»։

«Մինչ նա վոչ վոք չի կարողացել, —գրում ե Մաքոիմ Գորկին Զեխովի մասին, —այդպես անագորույն ճշտությամբ նկարագրել մարդկանց քաղենիկան առորյայի աղոտ քառում անցնող իրենց խայտառակ և տխուր կյանքը, նրա թշնամին յեղել ե գոեհկությունը, նա իր վողջ կյանքում պայքարել դրա գեմ, ծաղրել ե այն և պատկերել ե այն անաշտու գուր գրչով»։

Զեխովի հետեւյալ նշանավոր խոսքերը գրի յեւ առել Ա. Տիխոնովը:

«Դուք ասում եք, վոր իմ պիեսները դիտելիս արտասվել եք: Մենակ գուղք չեք, Այսինչ յես դրա համար չեմ գրել դրանք, այդ Ալեքսեևն¹ և նրանց արդպես լացկան դարձել: Յես ուրիշ բան եմ յանկացել Յես ցանկացել եմ միայն ազնվորեն և անկեղծաբար առել մարդկանց՝ նաև եցեք ձեզ, տեսեք ինչպես վատ և տխուր եք ապրում դուք: Ամենից գլխավորն այն ե, վորպեսզի մարդիկ հասկանան այդքանը, իսկ յերբ կհասկանան դա, նրանք անպայման իրենց համար ուրիշ, լավ կյանք կստեղծեն: Յես այդ կյանքը չեմ տեսնի, բայց յես դիտեմ, վոր այն ըուրովին ուրիշ կլինի, նման չի լինի այն կյանքին, վորը կա: Իսկ առայժմ այդ կյանքը չկա և յես նորից ու նորից կասեմ մարդկանց՝ հասկացեք, վորքան վատ և տխուր եք ապրում: Լաց լինելու Բնչ կա այս տեղ»:

Ա. դ ասում եր Զեխովն իր կյանքի վերջում: Մահացող գրողը խորապես տողորդած եր «այլ, լավ կյանք ստեղծելու անհրաժեշտության մտքով: Դա պատահական խոսակցություն չեր պատճական զրուցակցի հետ: Մահամնա «Հարսնացու» պատճական գրությունը հետ պատճական մեջ Զեխովը գրում ե՝ «գլխավորը՝ պետք և հեղաշրջել կյանքը, իսկ մնացյալ ամեն ինչ անկարելոր ե»:

Հեղաշրջել կյանքը, սակայն ինչպես: Այդ բանը Զեխովը չգիտեր և այդ հարցին նա պատասխան չի տվել:

Զեխովը գլխականության մեջ յերեսցել և այն

1 Ալեքսեև—ուժիւյոր Կ. Ստանիլավսկու իսկական ազգանունը, վորը Զեխովի պիեսները բեմադրել և Մոսկայի Գեղարվեստական թատրոնում

ժամանակ, յերբ հավատը դեպի հեղափոխական գաղափարները, վորն ապրում ելին անցյալ տասնամյակների գրող—լրազնոչինցիները, հողմահար ելին յեղել: Յերիտասարդ Զեխովն անկեղծորեն խոստովանում եր, վոր ինքը չունի վոչ մի հասարակական գաղափար:

«Յես կուղեյի միայն ազտոտ արվեստագետ լինել», — հայտարարում եր նա:

Յեվ Զեխովին սկսում ե աշխատակցել մոնարխիստական «Նովոյե վրեմյա» թերթին, բազմից ընդգծելով, վոր նրան մասնավորապես խորթ և յուրաքանչյուր կուսակցությունն, ուստի և միենույն ե վորտեղ կտպագրի իր աշխատությունները:

«Նովոյե վրեմյալում» աշխատելը յերիտասարդ Զեխովի համար անհետեանք չանցավ: Նա կամենում եր նաև այլտեղ այդ «կարգապահական ջոկատներում», ինչպես հետազայում անվանում եր Զեխովին այդ լրագիրը, քաղաքական պայքարից անկախ գրող մնալ: Բայց դա նրան չհաջողվեց: Յերիտասարդ գրողի հասարակական հայացքները թափանցվում ելին նովովրեմենյան թույնով: Ամբողջ տասնամյակ անցավ, մինչև Զեխովն ազատագրվեց «Նովոյե վրեմյայի» ազգեցությունից, կարողացավ գուրս մղել իրենից, իր իսկ արտահայտությամբ, ճորտատիրական արյան վերջին կարթիլները:

Ճորտական արյան դեմ մղած ալդ պայքարում Զեխովին ոգնեց իրեն հատուկ, իսկական արվեստագետի մեծագույն ազնվորթյունը: Վորչափ խորն եր թափանցում Զեխովը ուստական իրականության խորքն, այնչափ հեռանում եր նա նախկին անտարբե-

բությունից գեղի հասարակական հարցերն ու քաղաքական պայքարը, Գրողը տեսնում եր ժողովրդական դանդաների տառապանքները ինքնակալության կողմից ձնշված յերկրում, վորին արհամարհանքով անվանում եր «կազյոննի»:

Այդ կազյոննի յերկրի մասին Զեխովը գրում եր խիստ, իսկ վերջին տարիներում՝ անխնա։ Գրում եր այն մասին, վոր գլուղացիությունը «անստունից վատ և ապրում»։ Այն մասին, վոր բանվորներն «աշխատում են առանց հանգստանալու... ապրում են կիսաքաղց և յերբեմն միայն գինետանն են սթավվում այդ կողմարից»։ Այն մասին, վոր քաղաքում «չկա վհա մի ազնիվ մարդ, վհա մի»։ Այն մասին, վոր նրանք, ովքեր իրենց ինտելիգենտ են համարում, «գյուղացիների հետ անստունների նման են վարչում, վատ են սովորում, լրջորեն վոչինչ չեն կարդում, վոչինչ չեն անում, իսկ գիտությունների մասին միայն խոսում են»։

Վճռական անկեղծությամբ Զեխովը ցույց եր տալիս, վոր «այդ բոլորը կյանք չեն, մարդիկ չեն, այլ մի ինչ վոր, ըստ ձեր միայն գոյություն ունեցող բան»։ Յեվ նա մերկացնում եր նրանց, ովքեր ամենից ավելի պահպանում եյին այդ ձեր՝ ցարական բյուրոկրատիային։ Իր ամենից նշանակալից պատմվածքներից մեկում՝ «Պատյանավոր մարդը» գրվածքում Զեխովը վոչ միայն նկարագրել ե, ինչպես պատյանավոր մարդու ազգեցությամբ «քաղաքում սկսում են վախենալ ամեն ինչից», այլ և բացականչել ե.

«Երեւ վիրավորանքներ, ստորացումներ, չհամարձակվել բացարձակ հայտարարել, վոր դու ազնիվ, ազատ

մարդկանց կողմն ես... և այդ բոլորը շնորհիվ ինչ վոր աստիճանավորի, վորը գրոշի արժեք ունի, —վհա, այլևս այսպես ապրել անհնարին ե»։

Յերիտասարդ ժամանակ Զեխովը պնդում եր, վոր «Ռուսաստանում յերբեք հեղափոխություն չի լինի»։ Հետագայում գրողն ականատես յեղավ կուտակվող հեղափոխական ալիքին։ Նրա վստահությունը, վոր «յերբեք հեղափոխություն չի լինի», յերերուն դուրս յեկավ։ Բայց հեղափոխության ուղիները և նրա ուժերը Զեխովի համար մնացին անորոշ։ Նա գիտեր, վոր իր հերոսներին, բժիշկ Ստարցեին («Ինոնիչ») կամ Վերա Կարդինային («Հարազատանկունում») չեպատկանում ապագան, նրանք չեն «հեղաշրջելու կյանքը»։ Մեծ արվեստագետի սրատեսությամբ նախատեսավ նա, վոր նրանք հեղափոխական զեղքերի զեմ հանդիման ժողովրդի թշնամիների լադերում են լինելու։ Այս ինչ և գրել Զեխովը մեկ անգամ իր ծոցատերում։

«Մեծ լեպքերը մեղ հանկարծակի յեն բերելու, ինչպես քնած կույսերին... Յեվ նախրան կշողա նոր կյանքի արշալույսը, մենք չարագույժմ պառավների և ծերերի կփոխենք ու առաջինը ատելությամբ յերես կրարձնենք այդ արշալույսից և կղրպարտենք նրան»։

Զեխովն այդ բանում չսխալվեց։ Հոկտեմբերյան հեղափոխության պատմությունն ամբողջովին հաստատեց նրա մարդարեւթյունը։ Հեղափոխությունը հարկադրված յեղավ պայքարել սպիտակ գվարդիականության, սարութիւնի, վնասարարության դեմ։

90. ական թվականներին, յերբ Ռուսաստանն ար-

ղլունաբերական վերելք երապրում, Զեխովը հակամիտ
եր հույսեր ունենալ կապիտալիզմի վրա, վոր ար-
դյունաբերական բուրժուազիան փոխարինելով ազնը-
վականության ու կալվածատերերին, Ըուսաստա-
նում կուլտուրա կհաստատի, ասիական, իրավագուրկ-
հայրենիքը կդարձնի յեվրոպական լուսավորյալ յեր-
կիր: Բայց միաժամանակ նա տեսնում եր կապի-
տալիզմի մյուս յերեսը: «Իմ կյանքը» վիպակում
Զեխովը գրում է.

«Ճորտական իրավունք չկա, սակայն աճում
ե կապիտալիզմը: Ազատազրական զաղափարների ա-
մենայեռուն ժամանակ իսկ նույնպես, ինչպես և
Բատիկի ժամանակները, մեծամասնությունը կերակ-
րում, հազցնում և պաշտպանում ե փոքրամասնությա-
նը, ինքը մնալով քաղցած, տկլոր, անողնական»:

Այն միակ հասարակական դասակարգը, վոր կա-
րող եր այնպես անել, ըստ Զեխովի արտահայտու-
թյան, վորպեսզի «ուժեղները չճնշեն թույլերին, վոր-
պեսզի փոքրամասնությունը մեծամասնության հա-
մար չըառնա պարագիտ կամ պոմպ, վորը ծծում ե
նրանից մշտապես լավագույն հյութեր», այդ դասա-
կարգը պրոլետարիատն ե: Բայց Զեխովը հետու յեր
նրանից և չեր հավատում նրա ուժերին: Հեղափոխա-
կանները Զեխովի համար մնացին ավելորդ մարդիկ,
հերձվածողներ: Նույնիսկ իր վերջին, հասարակական
մեծ փոփոխությունների նախազգացումներով թափանց
ված աշխատություններում, Զեխովը հեղափոխական-
ներին գուրս և բերում վորպես պարզամիտ մարդիկ,
վորոնք համակրանքի յեն արժանանում, սակայն ավելի
կարելցական ժայիտ են առաջ բերում: Դա Պետյա

Յըռֆիմովն ե՝ հավիտենական ուսանողը, «հիվանդա-
գին բարինը» «Բալենու այգին» պիեսից և թոքախ-
տից մեռնող տպագրիչ Սաշան «Հարսնացու» պատմ-
վածքից:

90-ական թվականների սկզբում Զեխովը գրում է.

«Այն գրողները, վորոնց մենք համարում ենք
հավիտենական կամ ուղղակի լավ գրողներ և վորոնք
դյութում են մեզ, ունեն մեկ ընդհանուր և չափա-
զանց կարևոր հատկանիշ՝ նըանք ուր վոր գնում են
ու հրավիրում են ձեզ նույն տեղ և դուք
զգում եք վոչ թե ուղեղով, այլ վողջ եյությամբ, վոր
նըանք ինչ վոր նպատակ ունենա:

Յեվ Զեխովը վորոնում եր այդ նպատակը, վորո-
նում եր աղնվորեն, անդաղար, անհանգիստ:

Վաղաժամ մահը ընդհատեց այդ վորոնումները:
Նպատակը մնաց չգտնված:

Սակայն նշանակում ե դա, վոր Զեխովը չի պատ-
կանում այն զրողների թվին, վորոնց նա ինքն ան-
վանում եր հավիտենական:

Զեխովը չգտավ իր հասարակական իդեալը: Բայց
նա մեծ ե իր խորը և անկեղծ անձկությամբ դեպի
այդ իդեալը, նա նրա խոսքին, չեխովյան պարզ և
մեղմ խոսքին, նրա յուրաքանչյուր պատմվածքին
տալիս ե իսկական գեղարվեստական աշխատության
լրջություն և կարևորություն:

«Կարդալով Անտոն Զեխովի պատմվածքները,—
գրում ե իր հիշողություններում Մ. Գորկին, — զգում
ես քեզ ասես, ուշաշնան թախծոտ որում, յերբ ոդն այն-
պես թափանցիկ ե և նրանում այնպես վորոշակի
գծաղրված են մերկ ծառերը, անձուկ տները, գորշ

մարդիկ... Հեղինակի միտքն, ասես, աշնան արև լինի,
վոր անազորույն պարզությամբ լուսավորում ե
տրորված ճանապարհները, ծուռ ու մուռ փողոցները,
անձուկ և կեղառոտ աներն, ուր թախծից ու ծուլու-
թյունից խեղդվում են փոքրիկ, խղճուկ մարդիկ,
տունը լցնելով իրենց անիմաստ, մըափուն ունայնու-
թյամբ...

Այդ ձանձրալի անուժ մարդկանց զորշ ամբոխի
կողքով անցավ մեծ, խելացի, ամեն ինչի ուշադիր մի
մարդ, նայեց իր հայրենիքի այդ ձանձրալի մարդ-
կանց և տիսուր ժպիտով, բայց խորին կշտամբանքով,
հուսահատ տրտմությունը դեմքին և կրծքում, անուշ,
անկեղծ ձայնով ասաց.

«— Տիսուր եք ապրում, պարոններ»:

Այդ խորը և անկեղծ կշտամբանքում՝ Զեխովի
հեղափոխական նշանակությունն ե:

«Հաղարջ» պատմվածքում Զեխովը դրում ե.

«Հարկավոր ե, վորպեսզի յուրաքանչյուր գոհ,
յերջանիկ մարդու դռան ինտե կանգնած լինի մեկը
մուրճը ձեւքին և մշտական հարվածով, հիշեցնի վոր
դժբախտ մարդիկ կան»:

Զեխովը չեր նկատում, վոր այդ մուրճավոր մար-
դիկ դուրս են դալիս հեղափոխական ընդհատա-
կից: Դուրս են դալիս վոչ թե նրա համար, վորպեսզի
հիշեցնեն յարական ոեժիմին և բուրժուազիալին այն
մասին, վոր կան դժբախտներ, այլ, վորպեսզի
այդ դժբախտներին կաղմակերպեն հեղափոխական
բանակում:

Հեղափոխությունը յեկավ և հեղաշրջեց կյանքը:
իրականացավ այն, ինչի մասին չեխովյան «Յե-

լեք քույրեր» պիեսի գործող անձերից մեկն ասում ե.
«Յեկավ ժամանակը, մեզ վրա ահազին մի կույտ
ե գալիս, պատրաստվում ե առողջ, ուժեղ փոթորիկ,
վոր գալիս ե, արդեն մոտ ե և շուտով կփչի-կտանի
մեր հասարակությունից ծուլությունը, անտարբերու-
թյունը, նախապաշարմունքը գեղի աշխատանքը,
փտած ձանձրույթը... 25-30 տարի հետո կաշխատի
արդեն յուրաքանչյուր մարդ: Յուրաքանչյուր»:

Զեխովի նկարագրած Ռուսաստանն անցել ե
պատմության զիրկը: Զեխովյան հերոսների և մեր
յերկրի մարդկանց մեջ անդունդ ե պառկած: Բայց
ինքը Զեխովը, նրա պատմվածքները միացել են:
Վորովհետև նրանց յուրաքանչյուր տողը ճշմարտու-
թյուն ե պարունակում իր մեջ հեղափոխության ա-
լիքով մեղանից հեռացած յերկրի մասին: Յեվ այդ
ճշմարտությունը կոչ ե անում պայքարելու, վոր-
պեսզի անցյալն այլևս յերբեք չկերպառնա:

Ա. Պ. ԶԵԽՈՎԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ա.Ռ.Ա.ՆՉՋԻՆ ԳՐՔԵՐՈՎ

1. «Անյուտան», թարգմ. Հարություն Յեսայան, Տվիխիս. 1902:
2. «Թիմակ», թարգմ. Հարություն Յեսայան, Թիֆլիս, 1902:
3. «Թրագ», թարգմ. Տ. Վ. Բագու, 1903:
4. «Մի քանի պատմվածքներ», թարգմ. Ա. Վ. Թիֆլիս, 1903

Այս ժողովածվի մեջ մտել են.

1. Ճառախոս», 2. «Դատաստանի նախորդ գլուխը», 3. «Լավ վերջավորություն», 4. «Ե՞ր, հասարակություն» և 5. «Խաղատում» պատմվածքները»

5. Տաղտկալի պատմություն» (ճերունու որագրից) թարգմ. Գ. Ա. Բագու, 1903:

6. «Մարզը սկայանի մեջ» զբույց, թարգմ. Ա. Բարութչ., Շուշի, 1904:

7. «Պատմվածքներ», թարգմ. Գ. Արաբաջյան, Ալեքսանդրապոլ, 1904:

Պատմվածքների տյա ժողովածվի մեջ մտել են

1. Քնել եմ ցանկանում», 2. «Գիմնազիոտը»
3. ««Քննիչը», 4. «Ընտանիքի հայրը», 5. «Թշնամիներ», 6. «Ապոքինի զավակ», 7. «Աքսորանքի մեջ», 8. «Անտանելի մարդիկ» և 9. «Սկ աբեղա»:

8. «Պատմվածքներ», թարգմ. Ռ. Խանզադ. Թիֆլիս, 1913:

Բովանդակություն

1. «Քամելոնն», 2. «Հարկ յեղած միջոցները»
3. «Պատյանի մարզը», 4. «Շնիկով տիկինը», 5. «Շվեդական լուցիկ»:

9. «Ընտիր պատմվածքներ»

1934:

Բովանդակություն

1. «Զինովիկի մահը», 2. «Մաքերի խոռոչություն»,

3. «Զարամիտը», 4. «Թախիծ», 5. «Հոգեհանդիսա»,
6. «Պալտս № 6», 7. «Պատենավոր մարզը» և 8. «Զորակում»:

10. «Պատյանի միջին մարզը», թարգմ. Հ. Բողոքանյան, Ա. Մ. Լինինի քննադատական—կենսադրական ոչերկով, Ռուսով—Դոն, 1935:



Գլավլիտի լիազոր Խ. 9242 Պատվեր 1065 հրատ. 4239
տիրաժ 3000 թուղթ 72×110 սպ. 3 $\frac{1}{4}$ մամ., 51.200
նիշ, հեղ. 4 մամ.

Ցերկան, Պետհրատի տպարան, Լենինի № 65,

ՀՀ Ազգային գրադարան



NL0322118

14.900